



ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Հայաստան-Սփիւռք 6-րդ Համաժողովը

Սեպտեմբեր 18-20-ին Երեւանի մէջ պիտի կայանայ Հայաստան-Սփիւռք 6-րդ համաժողովը՝ «փոխադարձ վստահութիւն, միասնակամութիւն եւ պատասխանատուութիւն» խորագրին տակ:

Համաժողովին հրաւիրուած են մասնակցելու համահայկական կառոյցներու ղեկավարներ, հասարակական-քաղաքական դէմքեր, մշակութային գործիչներ, բարերարներ, մամուլի ներկայացուցիչներ եւ տարբեր համայնքներու մէջ հեղինակութիւն ունեցող անձնավորութիւններ:

Համաժողովի ընթացքին նախատեսուած են քննարկումներ՝ Արցախի հարցի, մայրենի լեզուի, սփիւռքահայ երիտասարդութեան, սփիւռքի տնտեսական ներդրումներու, զբօսաշրջութեան զարգացման եւ այլ համագային կարելութիւններ կայացնող հարցերու վերաբերեալ:

Նախորդ հինգ համագումարներու ընթացքին եւս քննարկուած են նոյնանման հարցեր, եւ որոնց շուրջ ընդունուած են յայտարարութիւններ: Սակայն, տիրող կարծիքը այն է որ, այս համագումարներու եզրակացութիւնները մնացած են թուղթի վրայ, առանց գործնական քայլեր առնելու, զանոնք զոնէ որոշ չափով իրականացնելու ուղղութեամբ:

Այս՝ 6-րդ Համագումարը որքանով պիտի տարբերի նախորդներէն, պիտի գայ ցոյց տալու ժամանակը: Նման համագումարները իրենց նպատակին կը ծառայեն, այն պարագային երբ քննարկումներու արդիւնքով յառաջացած միտքերը կը վերածուին ծրագիրներու, որոնց իրականացումը եւ հետապնդումը կը կատարուի պետական մակարդակով, սփիւռքեան կառոյցներուն եւ մասնագետներուն տակով յատուկ պարտականութիւններ:

Համաժողովի ընթացքին նախատեսուած օրակարգերը մեծ կարելութիւն կը ներկայացնեն ազգի բոլոր բաղկացուցիչ տարրերուն համար: Սակայն, ներառուած չէ խիստ կարեւոր մէկ այլ հարց, որ կը վերաբերի արտագաղթի տակաւ շարունակուող ու ցաւալի երեւոյթին: Հայրենիքի գոյութիւնը պայմանաւորուած է իր ժողովուրդով, իսկ անոր ապահովութիւնը՝ թուաբանակով:

Ժամանակն է որ, Հայաստան-Սփիւռք համաժողովը անդրադառնայ նաեւ այս հարցին եւ որոշումներ առնէ մեր ժողովուրդը իր հողին ու հայրենիքին կառչած պահելու ուղղութեամբ:

Կան բոլոր տուլները որպէսզի Հայաստան-Սփիւռք 6-րդ համաժողովը դառնայ անկիւնադարձային: Այդ նպատակին հասնելու համար պէտք է ցուցաբերել նոր մօտեցում:

«ՄԱՍԻՍ»

Եւրոպական Դատարանը Սկսած է Քննել Ապրիլեան Պատերազմի Վերաբերեալ Հայցերը



Ապրիլեան պատերազմի ընթացքին Ատրպէյճանի կողմէ կատարուած ռմբակոծութեան հետեւանքով քանդուած բնակարան մը՝ Թալիշի մէջ

Ապրիլեան պատերազմի օրերուն ատրպէյճանցիներու կողմէ խոշտանգուած գինուորականներու եւ խաղաղ բնակիչներու, ինչպէս նաեւ պատերազմի հետեւանքով տեղահանուած խաղաղ բնակիչներու գործերով 359 հայց ներկայացուած է Մարդու իրաւունքներու Եւրոպական Դատարան (ՄԻԵԴ): Միջազգային իրաւունքի մասնադէտ Արա Ղազարեան «Ազատութեան» հարցին ի պատասխան յայտնած է, որ անոնցմէ աւելի քան քսանը արդէն խորհրդակցութեան յանձնուած է եւ քննութեան փուլին մէջ է:

Քննութեան ընթացքին մէջ գտնուող երկու տասնեակէ աւելի հայցերով Ստրասպուրկի դատարանը արդէն հարցեր ուղղած է Ատրպէյճանին, ինչը կը որոշակի տեղեկութիւններ հաղորդէ, մաս-

նաւորապէս, թէ ինչ հանգամանքներու մէջ գոհուած են գինուորները կամ խաղաղ բնակիչները, որոնց մարմինները խոշտանգուած եղած են:

«Մենք ակնկալում ենք իրաւական պաշտպանութեան արդարացի փոխհատուցում՝ դա կարող է լինել ե՛ւ խախտումը ճանաչել, ե՛ւ յետագայում արդէն նիւթական փոխհատուցում՝ նիւթական վնասի, բարոյական վնասի դիմաց: Բայց առաջին հերթին դեռ պէտք է հասնել նրան, որ Եւրոպական դատարանը ճանաչի, որ տեղի է ունեցել խախտում», - յայտնած է միջազգային իրաւունքի մասնագէտը:

Ղազարեան նշած է, որ Ստրասպուրկի դատարանին կը պահանջեն ընդունիլ Ատրպէյճանի կառավարութեան կողմէ Մարդու իրա-

Շար.ը էջ 5

ՍԴ Հնչակեան Կուսակցութեան Շնորհաւորական Նամակը Արցախի Հանրապետութեան Նախագահ Բակո Սահակեանի Վերընտրութեան Առթիւ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանի վերընտրութեան առթիւ, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը յղած է հետեւեալ շնորհաւորական նամակը.

Մեծարգոյ Պարոն Նախագահ, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան անունով քերտօրէն կը շնորհաւորենք Ձեզ՝ Արցախի Հանրապետութեան Նախագահի պաշտօնին վերընտրուելու բարեբաստիկ առիթով:

Հերոսական Արցախի համար այս ճակատագրական հանգրուանին, Ձեր նման նուիրեալ, կորովի եւ իմաստուն ղեկավարի մը՝ հանրապետութեան նախագահի պարտականութիւններու վերստանձնումը մենք կ'ողջունենք եւ հաւատացած ենք, որ ձեր ղեկավարութեան ներքոյ, Արցախը պիտի շարունակէ յաղթահարել իր դէմ ծառայած բոլոր մարտախրաւերները, միշտ իր թիկունքին ունենալով համայն հայութեան նեցուկը:

Այս առիթով, կը մաղթենք Ձեզ քաջառողջութիւն, ոյժ եւ անսպառ եռանդ՝ Ձեր բարձր առաքելութեան իրականացման ճանապարհին:

ՍԴՀնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւն

Ապաստան Ստանալու Համար Սեւան Նշանեան Դիմած է Յունաստանին

Պոլսահայ մտաւորական, լեզուաբան Սեւան Նշանեան, որ Յուլիս 14-ին յայտարարած էր թրքական բանտէն փախուստին մասին, ապաստան ստանալու դիմում ներկայացուցած է Յունաստանի իշխանութիւններուն: Մտաւորականը այս մասին յայտնած է «Արմէնփրէսին» տուած հարցազրոյցի մը ընթացքին: Ան յայտնած է նաեւ, որ գործընթացը բարեյաջող կերպով աւարտին հասցնելէ ետք կը փափաքի Հայաստան ապրելու:

«Գործընթացը պիտի սկսինք: Յունաստան ի սկզբանէ դիտարկած եմ որպէս իմ երկրորդ կամ երրորդ հայրենիքս, այս շատ զեղեցիկ ու քաղաքակիրթ երկիր է: Շատ ուրախ պիտի ըլլամ կեանքիս նոր հանգրուանը ապստեղ անցընելով», ըսած է Նշանեան:

Բոլորին ամէնէն շատ հետաքրքրող հարցին, թէ ինչպէ՞ս փախած է բանտէն, Նշանեան ըսած է, - «Դիւրին էր: Ոչ մէկ խնդիր եղաւ: 1.5-2 տարի ծրագրեցինք, սակայն գործնականին մէջ այդ ծրագիրներէն եւ ոչ մէկուն կարիքը եղաւ: Քալեցինք, գացինք: Թուրքիոյ Հանրապետութեան պիւրոկրատիան անհետեւեալ, ոչ խելամիտ մեխանիզմ մըն է, որ կ'ապրի երազներու անմեղսունակ աշխարհին մէջ: Եթէ հասկնաս անոր տրամաբանութիւնը, շատ հեշտ կրնաս խաղացնել մատերուդ վրայ»:

Ընտանիքի միւս անդամներուն նկատմամբ մտավախութիւն ունենալու կապակցութեամբ, Նշանեան յայտնած է որ, իր չորս մեծ զաւակները այս պահուն ամառուային հանգիստը Թուրքիա կ'անցընեն եւ ինք չի կարծեր, որ անոնց գլխուն բան մը կու գայ:

Ապագային Հայաստան գալու մտադրութիւններու մասին թրքահայ մտաւորականը յայտնած է ըսելով, - «Երբ կարողանամ օրինական կերպով հանգիստ շրջիլ, առաջին իսկ հնարաւորութեան պարագային կը ցանկամ գալ Հայաստան: Բանտին մէջ գտնուած ժամանակա Հայաստան գտնուող ընկերներէս մեծ աջակցութիւն ու սէր ստացած եմ: Շատ մարդիկ կան, որոնց կը ցանկամ շնորհակալութիւն յայտնել»:

«ՄԱՍԻՍ» ՅԱԶՈՐԴ ԹԻՒԸ

Տարեկան արձակուրդի բերումով «Մասիս» լոյս չի տեսներ Օգոստոսի առաջին երկու շաբաթներուն:

Մեր յառաջիկայ թիւը լոյս պիտի տեսնէ Շաբաթ, Օգոստոս 20-ին:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Կատարուեց Այն, Ինչն Անխուսափելի էր

ՀԱՅԿԱԶՆ ՂԱՐԻՅԵԱՆ

Պոստինի եւ Ալիեւի Սոչիի հանդիպման վերաբերեալ տեղեկատուութիւնը բաւական սուղ է, կողմերի պաշտօնական հաղորդագրութիւններում ընդհանուր ձեւակերպումներ են տարածաշրջանի ու անվտանգութեան վերաբերեալ: Հաղորդագրութիւններում «բացակայում» է դարաբաղեան թեման, յամենայնդէպս առանձնաշատուկ չի նշուում:

Հանդիպմանը նախորդող օրերին, աւելի ճիշտ Յուլիսի 4-ի միջադէպից յետոյ ուստարպէյճանական շարաբերութիւններում առկայ լարուածութիւնն սկսեց արտայայտուել նաեւ հրապարակային ռեժիմում: ՌԴ ԱԳՆ-ն երկու կողմ յայտարարութիւն արեց Ատրպէյճանի հասցէին: Ալիեւի հետ հանդիպումից առաջ Պոստինը խօսեց լեզգիների խնդիրներից, իսկ հանդիպման վերաբերեալ էլ ասաց. «Խնդիրն ինձ մօտ կը լինի մէկ ժամից: Մէկ ժամ անց ես հանդիպելու եմ Ատրպէյճանի նախագահին»:

Զուգահեռ, Մոսկուան Ատրպէյճանին նաեւ «բլիթ» էր մատուցում նորագոյն զինատեսակների ու Հայաստանի ուղղութեամբ տարբեր «առաջարկների» տեսքով, այդ թւում ռուսերէնը ՀՀ պաշտօնական լեզու դարձնելու մասին:

Ատրպէյճանը լուրջ խնդիր է դարձել Մոսկուայի համար: Ատրպէյճանն ակտիւ մասնակցում է Ռուսաստանը շրջանցող էներգետիկ ու հաղորդակցական տարբեր նախագծերի, վարում է բաւական ինքնուրոյն արտաքին ու ռազմական քաղաքականութիւն:

Նկատելի է, որ Մոսկուան անորոշութեան մէջ է, նոր մօտեցումներ ու լուծումների տարբերակներ չկան, իսկ աւանդական մեթոդները, այդ թւում հայկական շահերի հաշուին, այլեւս սպառել են իրենց:

Այս խնդիրներն իրենց ազդեցութիւնն են ունենում Ղարաբաղեան թեմայի վրայ, աւելի ճիշտ՝ այդ թեման դարձել է յարաբերութիւնների պարզաբանման ասպարէզ, որտեղ սակայն Պաքուն ու Մոսկուան յայտնուել են ռազմաքաղաքական փակուղում, ապրիլեան ռազմագործողութիւններից յետոյ:

Կատարուել է այն, ինչն անխուսափելի էր՝ Ռուսաստանը քաղուէ է իր «պախտեռային» քաղաքականութեան պտուղը: Նկատելի է, որ Մոսկուան Պաքուին մղում է ինչ որ քայլերի, փորձում արագացնել դրանք՝ փոխադարձ անվտանգութեան իրավիճակում: Պոստինի ու Ալիեւի առերեսումը հասունացել էր այս խնդիրների համատեքստում:

Ինչ հանգուցալուծում է լինելու՝ դժուար է ասել: Ռուսաստանին Ատրպէյճանն անհրաժեշտ է եւս Ղարաբաղի խնդրում Հայաստանի իշխանութեան պահուածքի պայմաններում: Այդ պահուածքը Ատրպէյճանին տուել է պատերազմի ու տարածքի իրաւունք, Հայաստանի իշխանութիւնը պատրաստ է քննարկել ցանկացած տարբերակ՝ «կայունութիւնը», այսինքն՝ սեփական իշխանութիւնը պահպանելու համար, ինչն էլ դարձել է ներկայիս փակուղային ու պայթիւնավտանգ իրավիճակի պատճառներից մէկը:

«ԼՐԱԳԻՐ»

Կոռուպցիան Եւ Հովանաւորչութիւնը Միանգամայն Օրինական Հիմքերի Վրայ

ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՀՀ կառավարութիւնը վերջին նիստում հարկային արտօնութիւններ տուեց անցած տարեվերջին գրանցուած «Գրին ֆարմեր» ընկերութեանը՝ միանգամից երկու ուղղութեամբ:

Ըստ այդմ, ընկերութեան կողմից իրականացուող ներդրումային ծրագրի շրջանակում 2017թ. Յուլիսի 21-ից մինչեւ 2018թ. Յուլիսի 31-ը ներառեալ ներմուծուող ապրանքների՝ մաքսային եւ հարկային մարմինների կողմից հաշուարկուող աւելացուած արժէքի հարկի վճարման ժամկէտը 3 տարով կը յետաձգուի:

Կառավարութեան մէկ այլ որոշմամբ ընկերութեան կողմից գերակայ ոլորտում իրականացուող ներդրումային ծրագրի շրջանակում ներմուծուած (ներմուծուող) տեխնոլոգիական սարքաւորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը եւ (կամ) նիւթերը կ'ազատուեն ներմուծման մաքսատուրքից:

Ընկերութիւնը նպատակադրուած է կատարել ընդհանուր շուրջ 1,3 մլրդ դրամի ներդրում, որից սարքաւորումների համար նախատեսուած գումարը կը կազմի մօտ 490,5 մլն դրամ:

Ներդրումային ծրագրի արդիւնանէտութեան եւ դրանով պայմանաւորուած դատողութիւններ անելը թերեւս անշարհակալ գործ է, առաւել եւս, որ չկայ ուսումնասիրութիւն, թէ արդեօք ՀՀ կառավարութիւնն այս կարգի ներդրումներ կատարելու պատրաստակամութիւն ունեցող բոլոր ընկերութիւններին է տրամադրում արտոնութիւններ, թէ՞ սա առանձնաշատուկ մօտեցման դրսեւորում է: Իսկ առանձնաշատուկ վերբերմունքի դրդապատճառներ, կոնկրետ «Գրին ֆարմեր» ընկերութեան հետ կապուած իհարկէ կայ, քանի որ ընկերութեան մէկ երրորդ բաժնետէրը ՊԵԿ նախագահ Վարդան Յարութիւնեանի որդիներն են:

Armtimes.com-ը գրում է, որ ընկերութեան բաժնետէրերի կազմում են ՀՀ պետեկամուտների կոմիտէի նախագահ Վարդան Յարութիւնեանի երկու որդիները՝ Հենրիկ եւ Ռուբէն Յարութիւնեանները: Վերջիններս, իրաւաբանական անձանց պետական ռեզիւտորի տուեանները համաձայն՝ տիրապետում են նշուած ընկերութեան բաժնետոմսերի 17-ական տոկոսների: Այսինքն, երկուսով միասին այդ ընկերութեան 34 տո-

վերջերս ՀՀ գլխաւոր դատախազ Արթուր Դաշթեանը յայտարարել էր, թէ դատախազներն ու քննիչներն այսուհետ պատասխանատուութեան կ'ենթարկուեն, եթէ պարզուի, որ Հայաստանի դէմ Մարդու իրաւունքների եւրոպական դատարանի կայացրած որոշումների համար նաեւ նրանք են մեղաւոր: Ու հիմա, եթէ անգամ դատախազներն ու քննիչներն այսուհետ փորձեն աւելի «ձգուած» աշխատել, ապա դատաւորներին նման «հրահանգ» չի տրուել, ուստի վերջիններս շարունակում են արատաւոր աւանդոյթները՝ յայտնի վերջաբանով: Եւ այս ամենի հետեւանքով տուժում է պետութիւնը:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ»

կոսի սեփականատէրերն են: Մնացած 66 տոկոսի սեփականատէրը Արման Աբրահամեան անուն ազգանունով քաղաքացի է, որի ով լինելը պարզել չի յաջողուել: ՀՀ պետեկամուտների կոմիտէից, թերթի հարցմանն ի պատասխան հաստատել են, որ նշուած ընկերութեան բաժնետէրերը ՊԵԿ նախագահի որդիներն են:

Յատկանշական է, որ կառավարութեան նիստում նշուած որոշման նախագծերը ներկայացուել են ՊԵԿ-ի կողմից, որի ղեկավարը Վարդան Յարութիւնեանն է: Ստացուում է, որ հայրը հարազատ որդիների բիզնեսի համար հարկային եւ մաքսային արտօնութիւն է ապահովել:

Ինչպէս կարելի է բնորոշել այս երեւոյթը՝ կոռուպցիա, հովանաւորչութիւն, թերեւս հակառակ է: Կարելոյն այն է, որ անկախ երեւոյթի անուանումից, ամէն ինչ կատարուել է միանգամայն օրինական ճանապարհով: Հենց այստեղ էլ թաքնուած է շան գլուխը. Կոռուպցիան, հովանաւորչութիւնն ու անգամ կաշառքը Հայաստանում վաղուց գրուած են օրինական հիմքերի վրայ:

Ի վերջոյ, իսկապէս չկայ որեւէ իմաստ թաքցնել հարկերը, եթէ կարելի է օրինական ճանապարհով ազատուել դրանցից: Իսկ ինչ երաշխիք կայ, որ այդ ընկերութիւնն իսկապէս ապահովելու է խոստացած ներդրումներն ու աշխատատեղերը: Հարկային արտօնութեան հետ վերադարձը պետպիւտձէ չի կարող լինել, փոխարէնը բիզնեսը զարգացման հարաւորութիւն է ստանում:

«ՀԱՅԵԼԻ»

Դատավարական Արատաւոր Աւանդոյթները Շարունակուում են

Ե՛ւ «Մասնայ ծուր» գինուած խմբաւորման, ե՛ւ ժիրայր Սէֆիլեանի, ե՛ւ Վահան Շիրխանեանի դատավարութիւնների ժամանակ յատկապէս դատաւորների պահուածքից մէկ եզրակացութիւն կարելի է անել. իրենք ոչ թէ արդարադատութիւն են իրականացնում, այլ զբաղուած են քաղաքական վրէժխնդրութեան փորձերով: Ասուածի վկայութիւնը ոչ միայն մեղադրեալների, այլեւ անգամ նրանց փաստաբանների նկատմամբ դատաւոր Արտուշ Գաբրիէլեանի՝ առանց հիմնաւոր պատճառի կիրառած սանկցիաներն են: Երէկ բանն այնտեղ հասաւ, որ սանկցիաների հերթական շարանից յետոյ փաստաբանների պալատի նախագահը նամակ է ուղարկել ՄԻՊ-ին՝ խնդրելով դատարանների նախագահների խորհրդից պարզաբանումներ ստանալ փաստաբանների նկատմամբ կայացուած որոշումների հիմնաւորութեան վերաբերեալ:

Նոյնքան ցցուն է նաեւ դատաւոր Բեչիկթաշեանի՝ Վահան Շիրխանեանի հետ «գողական ռազմականներ» չիչեցնող պարզաբանումները, առանց նրա համաձայնութեան փաստաբան Ալուծեանին հանրային պաշտպանով փոխարինելը: Կարճ ասած, տպաւորութիւն է, թէ դատաւորները մտել են դահիճի կերպարի մէջ եւ փորձում են ամբաստան-

եալների համար անմարդկային պայմաններ ստեղծել եւ ամենաբուրի կերպով խախտել դատաբանութեան ժամանակ պաշտպանութեան իրաւունքը:

Ամենամիամիտ մարդն անգամ չի հաւատալ, որ դատաւորներն այս քայլին զնացել են ինքնագլուխ, առանց Բաղրամեան 26-ի հետ համաձայնեցնելու: Հայաստանում գործնականում սա բացառուած է: Եւ ուրեմն, է՛լ աւելի հիմնաւոր են դառնում կառիպները, որ գործ ունենք քաղաքական հերթական պատուէրի հետ: Միայն թէ քաղաքական պատուէրներ իջեցնելուց եւ այդ պատուէրները կատարելուց առաջ իշխանութիւններին չէր խանգարի յիշել անցեալի դառը փորձը, երբ Հայաստանում արդարադատութիւն չգտնելով՝ տասնեակ մարդիկ դիմել էին Մարդու իրաւունքների եւրոպական դատարան ու յաղթել: Հիմա, փաստօրէն, դատաւորների պահուածքի պատճառով լրացուցիչ հիմքեր են ստեղծում քրէական գործերը ՄԻԵԴ-ում բողոքարկելու եւ շահելու համար: Ընդ որում, իշխանութիւնները դեռ չեն մարսել 2008թ. Մարտի 1-ի գործերը. ՄԻԵԴ-ում դեռ ընթացում է այս գործերի քննութիւնը եւ, ամենայն հաւանականութեամբ, յօգուտ դիմող կողմի:

Մէկ ուշագրավ փաստ էլ.

ՄԱՄԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՅՒԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԼԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Ընտրութիւններու Ընթացքին Լրագրողներու Դէմ Բռնութիւններն ու Ճնշումները Աննախադէպ Էին»

«Ն ա խ ա գ ա ճ Սերժ Սարգսեանի խոստումը, թէ Հայաստանում լրագրողները նախորդ տարուայ Սարի թաղի դէպքերից յետոյ այլեւս բռնութեան չեն ենթարկուելու, չի պահպանուել», - լրագրողներու հետ հանդիպման ժամանակ յայտարարած է Խօսքի ազատութեան պաշտպանութեան կոմիտէի (ԽԱՊԿ) նախագահ Աշոտ Մելիքեան:



«Խորհրդարանական եւ Երեւանի աւագանու ընտրութիւններն ընդգրկող այս տարուայ առաջին կիսամեակի ընթացքում Խօսքի ազատութեան վիճակը յետընթաց է ապրել», - ընդգծած է Մելիքեան, աւելցնելով. «Ֆիզիկական բռնութիւնների առումով արձանագրուել է աճ. եթէ անցած տարուայ առաջին կիսամեակում երեք ֆիզիկական բռնութեան դէպք էր, 2017 թուականին ութն են դրանք, ճնշումների եւ տարատեսակ խոչընդոտումների թիւը երեսուն էր առաջին կիսամեակում 2016 թուականի եւ ութսունինն է 2017 թուականի առաջին կիսամեակում: Տեսնում ենք, որ աճը գրեթէ երեք անգամ է: Այս թուերը եւս մէկ անգամ ապացուցում են, որ մեզանում ընտրութիւններին ժամանակ աւելանում են ճնշումները եւ խոչընդոտումները լրագրողների, լրատուամիջոցների նկատմամբ»:

Խօսքի ազատութեան պաշտպանութեան կոմիտէի գեկոյցին համաձայն, այս տարուայ ընտրական շրջափուլի ընթացքին լրագրողներու դէմ կիրառուած բռնութիւններն ու ճնշումները աննախադէպ էին նոյնիսկ 2015 թուականի սահմանադրական հանրաքուէի, ինչպէս նաեւ 2013 թուականի նախագահական ընտրութիւններու համեմատութեամբ:

Իրաւապաշտպան Աշոտ Մելիքեանին կարծիքով, նախորդ ընտրութիւններուն լրագրողները կը

թիրախաւորուէին խախտումները բացայայտելու համար:

ԽԱՊԿ-ի գեկոյցը ներկայացնող Աշոտ Մելիքեան անդրադարձած է նաեւ իշխանութեան ներկայացուցիչներու կողմէ լրագրողներու նկատմամբ առկայ բացասական վերաբերմունքին, ընդգծելով, որ վերջերս Երեւանի կեդրոնը տուներէն զրկուած քաղաքացիներու հետ գրոյցի ժամանակ նախագահ Սերժ Սարգսեան իր պահուածքով բացասական օրինակ ծառայեց:

Ըստ Մելիքեանի ներկայացրած գեկոյցի, երկու տարի առաջ «Էլեկտրիկ Երեւան» ցոյցի ժամանակ լրագրողները դէմ իրականացուած բռնութիւնների գործով որեւէ առաջընթաց չկայ: Իսկ Սարի թաղի դէպքով այս տարուայ առաջին կիսամեակում ընդամենը մէկ մեղադրեալ է աւելացուել:

Իրաւապաշտպանի եզրայանգմամբ, նոյն իրաւապահներու անհամաչափ գործողութիւններով ստեղծուած անպատեհ իրավիճակն է լրագրողներուն դէմ ճնշումներու եւ բռնութեան աճին պատճառը:

Չեկոյցին համաձայն, այս տարուայ առաջին կէսն աննախադէպ եղած է լրագրողներու եւ լրատուամիջոցներու դէմ ներկայացուած դատական հայցերու ալիքով: Ամենաշատ՝ թիւով 34 հայց ՁԼՄ-ներուն դէմ եղած էր 2011-ին, սակայն այս տարուայ առաջին վեց ամիսներուն գրանցուած է 48 հայց: Անոնց մեծ մասը՝ 30-ը, դպրոցներու եւ մանկապարտէզներու տնօրէններու հայցերն էին Դանիէլ Իոաննիսեանին դէմ:

Առաջին Կիսամեակին Հայաստան Մէջ Անճնապանութեան 89 Դէպք

Այս տարուայ առաջին կիսամեակին Հայաստանի մէջ գրանցուած է թիւով 89 անճնապանութեան դէպք, բան մը, որ հինգով աւելի է նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի ցուցանիշէն, ստույգի մը ընթացքին տեղեկացուցած է ԱԻՆ ձգնաժամային կառավարման ազգային կեդրոնի պետ Յովհաննէս Խանգեղեան:

«Գերակշիռ մեծամասնութիւնը՝ 56-ը, բնակարաններում եւ առանձնատներում է, որը նուազել է 6 դէպքով, 12-ը՝ բարձրագրկ շինութիւններից նետուելու միջոցով, կամուրջներից՝ 5, հասարակական վայրերում՝ 3, բաց տարածքներում՝ 2 եւ այլ վայրերում՝ 11», - յայտնած է ան ու նշած, որ 89-էն 65-ը անճնապանութեան ձեւ ընտրած է կախուելու եղանակը, 19-ը՝ վար նետուելը, 3-ը՝ հրազէ-

նի կիրառումը, մէկը՝ երակներու վնասումը եւ մէկը՝ այլ եղանակով:

Ըստ ԱԻՆ պաշտօնեային, թիւը կարծիք է, որ անճնապանութեան տարածուած միջոց է կամուրջէն նետուելը, քանի որ այն ցուցանիշներուն մէջ նուազագոյնն է:

Անճնապանութեան փորձերու թիւը եղած է 203՝ նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածին համեմատ 233 դէպքի փոխարէն, տուժած է 161 անձ:

«99%-ում արձագանգում է իրականացուել եւ յաջողուել է կանխել», - ըսած է ան:

Խանգեղեան նշած է նաեւ, որ 2017 թուականի հաշուետու ժամանակահատուածին մէջ անճնապանութեան դէպքերէն 23-ը իրականացուցած են իգական սեռի ներկայացուցիչները եւ 66-ը՝ արական:

Շարմագանով.-

«ԵՏՄ-ԷՆ Դուրս Գալու Կոչեր Ընողները Յստակ Այլընտրանք Պէտք է Առաջարկեն»

Հայաստանի անդամակցութիւնը Եւրասիական տնտեսական միութեան (ԵՏՄ, ԵԱՏՄ), ըստ Ազգային ժողովի փոխնախագահ, իշխող Հանրապետական կուսակցութեան խօսնակ էդուարդ Շարմագանովին, գուտ քաղաքական որոշում չէ եղած, այլ եղած է յստակ տնտեսական հաշուարկներով ամրագրուած քաղաքական որոշում:

«Եթէ կան քաղաքական ուժեր, ովքեր ԵՏՄ-ից դուրս գալու կոչեր են անում, աւելի լաւ կը լինի ոչ թէ զգացմունքային հարթութեան վրայ խօսեն, այլ կոնկրետ այլընտրանք առաջարկեն եւ փաստեր: Մենք, երբ որ որոշում ենք կայացրել անդամակցել ԵՏՄ-ին, մենք յստակ հաշուարկներ ենք կատարել՝ թէ ինչ կը շահի մեր գիւղացին, ինչ կը շահի մեր ներդրողը, ինչ կը շահի տուրիզմը, տնտեսութիւնը», - Հանրապետականի գործադիր մարմնի նիստէն ետք լրագրողներու հետ զրոյցի ընթացքին յայտնած է Շարմագանով, նշելով, որ Հայաստան միացած է 170 միլիոնոց շուկային:

«Մենք աւելացրել ենք 23 տոկոս արտահանումը, որի առիւծի բաժինն արտահանում է ԵՏՄ երկրներ, մինչեւ 30 տոկոս աւելացել է գթօսաշրջիկների թիւը: Մենք չպէտք է կատարենք քաղաքական լոկ յայտարարութիւններ՝ առանց լուրջ հիմնաւորումների», - ըսած է Ազգային ժողովի փոխնախագահը:

Յիշեցնենք, որ Յունիսի 1-էն Ռուսիոյ մէջ ուժի մէջ մտած է Երթեւեկութեան միջոցներ վարելու թոյլտուութեան մասին նոր օրէնքը, ըստ որուն, կ'արգիլուի Ռուսիոյ մէջ օտարերկրեայ, այդ թուին՝ Հայաստանի վարորդական իրաւունքներով ձեռնարկատիրա-



Աժ փոխնախագահ Էդուարդ Շարմագանով

կան եւ աշխատանքային գործունէութիւն իրականացնել:

«Ելք» խմբակցութեան պատգամաւոր էդմոն Մարուքեան յայտարարեց, որ օրէնքը կը հակասէ ԵՏՄ աշխատութի ազատ տեղաշարժի սկզբունքին: Ընդդիմադիր պատգամաւորը նշեց, որ դիմած է Եւրասիական տնտեսական յանձնաժողովի աշխատակազմի նախագահ Տիգրան Սարգսեանին, առաջարկելով քայլեր ձեռնարկել ԵՏՄ համաձայնագրի կիրառումն ապահովելու եւ ՀՀ քաղաքացիներու շահերը պաշտպանելու ուղղութեամբ: Մարուքեան յայտարարած է նաեւ, որ Հայաստան պէտք է ԵՏՄ-էն դուրս գալու գործընթաց սկսի:

Նշենք, որ օրերս Եւրասիական տնտեսական միութիւնը (ԵԱՏՄ) պաշտօնական Մոսկուային առաջարկած է օտարերկրեայ վարորդական իրաւունքի արգիլման աղմկալարոց օրէնքը չտարածել դաշինքի անդամ երկիրներուն վրայ:

Ռուսական Բանտը Գտնուող Հրաչեայ Յարութիւնեան Տեղափոխուեցաւ Հայաստան

Հրաչեայ Յարութիւնեան չորս տարի ռուսական բանտին մէջ անցընելէ ետք այս տարուայ Յունիս 20-ին տեղափոխուած է Հայաստան՝ պատիժի մնացած մասն այստեղ կրելու համար:

Ըստ Արդարադատութեան նախարարութեան, դատապարտեալի փոխանցումէն ետք, ըստ Դատապարտեալներու փոխանցման մասին եւրոպական համաձայնագրին, օտարերկրեայ պետութեան կայացուցած դատավճիռը պէտք է ճանչցուի Հայաստանի դատարանին կողմէ՝ կատարելով քրէօրէն պատժելի արարքի համապատասխանեցում ՀՀ քրէական օրէնագիրքին՝ անփոփոխ ձգելով սահմանուած պատիժը:

Նախարարութիւնը նշած է նաեւ, որ Ռուսիոյ դատարանի դատավճիռը ճանչնալէ եւ այն կատարման ուղարկելէ ետք պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկին տեսակը եւ պատիժը կրելու վայրը կ'որոշէ Հայաստանի Արդարադատութեան նախարարութեան քրէակատարողական վարչութեան տեղաբաշխման յանձնաժողովը:

Յիշեցնենք, Թրոիքի շրջանի դատարանը 2014 թուականի Օգոստոսին Յարութիւնեանը 6 տարի 9 ամսուայ ազատազրկման դատա-



Ռուսական բնտէն Հայաստանի բանտ տեղափոխուած Հրաչեայ Յարութիւնեան

պարտած էր մերձսոսկովեան Փոտոլսք քաղաքի մօտակայքը տեղի ունեցած վթարէն ետք, որու հետեւանքով 18 անձ զոհուած, տասնեակներ վիրաւորուած էին:

Ըստ քննութեան, Յարութիւնեանի վարած բեռնատարը պատշաճ ձեւով չէ սպասարկուած, արգելակները խնդիր ունեցած են, որուն մասին ան պարտաւոր էր իմանալ:

Յարութիւնեանի հարազատները արդէն քանի մը տարի է, որ կը պայքարէին, որպէսզի ան պատիժը շարունակէր կրել Հայաստանի մէջ:

ԼՈՒՐԵՐ

Ատրպեյճանի Մեջ Նոր Հիսթորիա
ՀՀ Քաղաքացիի Որդին Ռուսիոյ Մօտ
Ամերիկայի Դեսպան

«Փաստ» թերթը կը գրէ որ, Սպիտակ Տունը ձոն Հանթսման կրտսերի թեկնածութիւնն առաջադրած է Ռուսիոյ մօտ ԱՄՆ-ի դեսպանի պաշտօնին համար: Հանթսմանի առաջադրումը հիսթորիայի ալիք բարձրացուցած է Պաքուի մէջ: Խնդիրն այն է, որ անոր հօր՝ ձոն Հանթսման աւագին ժամանակին շնորհուած է ՀՀ քաղաքացիութիւն: 1988 թ. աւերիչ երկրաշարժէն ետք Հայաստանին ցուցաբերած մեծ աջակցութեան համար:



Ճոն Հանթսման Ռուսաստանի մէջ Ամերիկայի Գործընկերութիւնը

Երկրաշարժէն ետք Հանթսման աւագը խորհրդային իշխանութիւններուն նիւթական օգնութիւն առաջարկած էր, իսկ ԽՍՀՄ փլուզումէն ետք արդէն անկախ Հայաստանին միջոցներ տրամադրած էր՝ Գիւմրին ու Սպիտակը վերականգնելու համար:

Ան բազմիցս գտնուած է Հայաստան (Ատրպեյճանի մէջ հաշտուած են՝ աւելի քան 40 անգամ): Հայաստանի մէջ բարեգործական գործունէութիւն իրականացնելուն համար անոր շնորհուած է ՀՀ քաղաքացիութիւն, նաեւ «Մերոպ Մաշտոց» շքանշան:

Նշենք, որ 80-ամեայ Հանսթման աւագ իր 1.1 միլիարդ տոլար կարողութեամբ ներառուած է «Forbes»-ի աշխարհի մեծահարուստներու ցուցակին մէջ:

Եռութա նահանգին մէջ մորմոններու եկեղեցիի հիմնադիրներու ուղիղ շառաւիղն է: 1982 թ. հիմնած է «Huntsman Chemical» ընկերութիւնը, որ կը ներառէ աւելի քան 34 քիմիական ընկերութիւն:

Ու ահա Պաքուի մէջ խիստ մտահոգ են, որ ՀՀ քաղաքացիի որդին պիտի դառնայ է Ռուսիոյ մօտ ԱՄՆ-ի դեսպանը: «Զարմանալի վիճակ ստեղծուած է՝ Մոսկուայի մէջ հայկական լոպպիին համար յայտնուած է հզօրագոյն դաշնակից՝ ի դէմս Միացեալ Նահանգներու դեսպանին», - կը գրէ ատրպեյճանական մամուլը:

Իսկ վերջին շրջանին Ռուսիոյ մէջ հայկական լոպպիին դարձած է Ատրպեյճանի գիշերային մղձաւանջը: Այլ ու ձախ յօդուածներ ու վերլուծականներ կը տպագրուին այն մասին, թէ ինչպէս ռուսաստանական պոսթմանն ու կը խաթարէ անոնց ռազմավարական

Ուշագրաւ փաստ մը եւս: Ատրպեյճանական մամուլին մէջ ներկայացուած է, թէ իբրեւ ձոն Հանթսման կրտսերը եղած է ՀՀ-ի մօտ ԱՄՆ-ի նախկին դեսպանը: Սակայն նման բան չկայ: Ան դեսպան եղած է Սինկափուրի եւ Չինաստանի մօտ, բայց ոչ Հայաստանի: Եւ այս կեղծ լուրը շրջանառութեան մէջ դնելով, իրենց զարմանքն ու մտահոգութիւնը կը յայտնեն մէկ այլ հանգամանքի առթիւ եւս:

«Զարմանալի աւանդոյթ մը կայ, որուն համաձայն Երեւանի մէջ այլ երկիրներու դեսպաններն այլ պաշտօնի անցնելէ ետք ալ ոչ միայն կը պահպանեն ջերմ գգացումները Հայաստանի նկատմամբ, այլեւ ամէն կերպով կը փորձեն պաշտպանել անոր շահերը: Այդպէս եղած է ՀՀ-ի մօտ Ֆրանսայի նախկին դեսպան Անրի Կիւնիի (2002-2006 թթ.) պարագային, որ նոյնիսկ գիրք գրած է՝ «Հայաստան. ժողովուրդի մը ոգին» եւ անցեալ տարի կայացած շնորհահանդէսի ժամանակ վիրաւորած Ատրպեյճանը:

«ՀՀ-ի մօտ ԱՄՆ նախկին դեսպան ձոն Էւանս նոյնպէս պաշտօնէն հեռանալէ ետք արդէն յայտարարած է, որ ԼՂՀ պէտք է վերադառնայ բանակցային սեղանի շուրջ, բան մը, որ Հայաստանին մեծ ուրախութիւն պատճառած է: Իսկ ՀՀ-ի մօտ ԱՄՆ-ի մէկ այլ նախկին դեսպան ձոն Հանթսման կրտսերն ընդհանրապէս ՀՀ քաղաքացիի զաւակ է», - չարակամութեամբ գրած է Ատրպեյճանական մամուլը:

Հայաստանի Կառավարութիւնը Հաւանութիւն
Տուաւ Հայ-Ռուսական Զօրախումբի
Համաձայնագրին

Հայաստանի Կառավարութիւնն հաւանութիւն տուաւ հայ-ռուսական միացեալ զօրախումբի համաձայնագիրը վաւերացնող օրէնքի նախագիծին:

Հայաստանի եւ Ռուսիոյ Պաշտպանութեան նախարարներ Վիգէն Սարգսեան եւ Սերկէյ Շոյկու անցեալ տարուայ Նոյեմբեր 30-ին Մոսկուայի մէջ կնքեցին երկու երկիրներու զինուած ուժերու միացեալ խմբաւորման ստեղծման մասին համաձայնագիրը:

Ըստ փաստաթուղթին, միացեալ խմբաւորման խնդիրն է Հայաստանի եւ Ռուսիոյ դէմ գիւնդարած յարձակման անմիջական նախապատրաստման ժամանակին բացառապէս յայտնուած ու անոր ետ մղումը:

Համաձայնագիրը կը մանրամասնէ, որ զօրախումբի խնդիրներ

րէն են՝ Հայաստանի եւ Ռուսիոյ պետական սահմանի ցամաքային մասի պաշտպանութիւնը, այդ շարքին՝ ՀԱՊԿ ուժերու եւ միջոցներու հետ համատեղ, օդատիեզերական տարածութեան մէջ Հայաստանի եւ Ռուսիոյ պետական սահմանի ծածկապաշտպանութիւնը, հակաօդային պաշտպանութիւնը, զբաղեցուցած շրջաններու, տեղանքի սահմանագիծի, դիրքերու եւ կառուցներու պահուումը, երկու երկիրներու զինուած ուժերու փոխգործակցութեամբ հակառակորդի ներխուժած զօրքերու խմբաւորումներու ջանջախուժը եւ այլն:

Միացեալ խմբաւորման կառավարման համար պիտի ստեղծուի միացեալ հրամանատարութիւն, զոր պիտի գլխավորէ միացեալ խմբաւորման հրամանատարը:

Բալո Սահակեան Վերընտրուեցաւ
Արցախի Նախագահ

Արցախի խորհրդարանը ձայներու մեծամասնութեամբ երկրի նախագահ ընտրած է գործող նախագահ Բալո Սահակեանը:

Նախագահ Բալո Սահակեանի օգտին քուէարկած է 28 պատգամաւոր: Էդուարդ Աղաբեկեանին ձայն տուած է 4 պատգամաւոր:

Արցախի Ազգային Ժողովը յատուկ նիստ հրաւիրուած էր, որուն ընթացքին, Սահմանադրութեան 168-րդ յօդուածին համաձայն, պիտի ընտրէր Հանրապետութեան նախագահ, որ պիտի պաշտօնավարէ մինչեւ գործող Ազգային Ժողովի լիազօրութիւններու աւարտը:

Նշենք, որ Արցախի նախագահական ընտրութիւններուն առաջադրուած էր երկու թեկնածու՝ գործող նախագահ Բալո Սահակ-



Արցախի Գախագահ Բալո Սահակեան
Եւ «Շարժում-88» խմբակցութեան պատգամաւոր էդուարդ Աղաբեկեան:

«Աղքատութիւնը, Եւ Գործազրկութիւնը Մեկ Օրուան Մէջ Լուծելի Խնդիրներ Չեն»,
Կ'ըսէ Նախարար

«Մենք պէտք է գիտակցենք, որ Հայաստանում 30 տոկոս աղքատութիւնը, գործազրկութիւնը եւ այն խնդիրները, որոնք որ կան, մէկ օրում լուծելի խնդիրներ չեն», - «Ազատութեան» «Ֆէյսբուքեան ասուլիս» հաղորդման ժամանակ յայտնած է Աշխատանքի եւ հասարակական հարցերու նախարար Արտեմ Ասատրեան, նշելով, որ բոլոր հասարակական խնդիրներու լուծման ամենակարճ ճանապարհը ներդրումներն են, տնտեսական աճը, նոր արդիւնքի ստեղծումը եւ այդ արդիւնքին աւելի հասցեակալ ու ճշգրիտ բաշխումը:

Նախարարն ընդգծած է, որ խոցելի խումբերու խնդիրներու լուծումը կառավարութեան առաջնային ծրագիրներէն մէկն է:

Հարցին, թէ հնարաւոր է, որ յառաջիկայ տարիներուն հաշմանդամութեան նպաստները բարձրանան, նախարարը պատասխանած է. - «Կոնկրետ որպէսզի մենք կարողանանք ասել, որ այս չափով կը բարձրանայ, չեմ կարող ասել, որովհետեւ մեր ծրագրերի շրջանակներ



Աշխատանքի եւ հասարակական հարցերու նախարար Արտեմ Ասատրեան

րում, կառավարութեան առաջնահերթութիւնները, որոնց մասին նաեւ վերջերս նշուեց, գնում են այն հիմնական թիրախներն ու ուղղութիւնները, որոնք առաւելագոյնս միտուած են մեր քաղաքացիներին խնդիրներ լուծմանը՝ որքանով հնարաւոր կը լինի: Առաջիկայում մենք աւելի առարկայական տեղեկատուութիւն կը տրամադրենք»:

Պաքուի Դատարանը 3 Տարուայ Ազատազրկման
Դատապարտեց Ալեքսանդր Լափշինը

Պաքուի դատարանը երեք տարուայ ազատազրկման դատապարտեց յայտնի ինթերնետ լրագրող, Ռուսիոյ, Իսրայէլի եւ Ուքրաինայի քաղաքացի Ալեքսանդր Լափշինը՝ Ղարաբաղ այցելելու, Ատրպեյճանի պետականութեան դէմ կոչեր հնչեցնելու համար:

Նշենք, որ մեղադրող կողմը պահանջած էր վեցուկէս տարուայ ազատազրկում:

«Ես մեղաւոր եմ Ատրպեյճանի ժողովուրդին առջեւ միայն անոր համար, որ իմ գործողութիւններս ատրպեյճանցիներուն ցաւ պատճառած են: Ես կը հասկնամ, թէ որքան կարեւոր է Ղարաբաղը Ատրպեյճանին համար: Ես որեւէ ձեռով յանցաւոր կապի մէջ չեմ մտած Հայաստանի կառավարութեան հետ», - ըստ «Interfax»-ի, իր եզրափակիչ խօսքին մէջ ըսած է Լափշին, աւելցնելով. - «Յոյսով եմ, որ զարբաղեան խնդիրը կը կարգաւորուի Ատրպեյճանի տա-

րած քայլին ամբողջականութեան ծիրին մէջ»:

Լափշինի փաստաբանը դատարանէն խնդրած է արդարացնել լրագրողը: Լափշին իր հերթին ինքզինք մեղաւոր չէ ճանչցած, ըսելով, որ իր այցը Ղարաբաղ գուտ գրօսաշրջիկական ճամբորդութիւն էր եւ որեւէ քաղաքական ենթահոգ չունէր:

Լափշինի փաստաբանը գոհ է դատավճռից: Ան չի բացառել, որ Լափշինին արտաքսնուեն Ռուսաստան, Իսրայէլ կամ Ուկրաինա:

«Արտաքսնուումը հնարաւոր է, Ատրպեյճանի օրէնսդրութիւնը անոր հնարաւորութիւնը կու տայ՝ միջազգային նորմերուն համաձայն:

Ռուսիոյ նախագահի մամուլ խօսնակ Տմիթրի Փեսքով յայտարարած է, որ Քրեմլին Լափշինի գործին եւ անոր հնարաւոր արտաքսնման չի հետեւիր: «Այս Քրեմլինի թեման չէ», - ըսած է Փեսքով:

Գերմանիոյ ԱԳ Նախարար. «Թուրքիոյ Յետ Յարաբերութիւնները Նախկինին Պէտ Շարունակելն Այլեւս Անհնար է»

«Մենք պէտք է շատ աւելի յստակ գործենք, որպէսզի Անգարա գտնուող պաշտօնատար անձերը հասկնան, որ իրենց վարած քաղաքականութիւնն անհետեւանք մնալ չի կրնար», - այսօր Պերլինի մէջ կայացած մամլոյ ասուլիսի ժամանակ յայտարարած է Գերմանիոյ Արտաքին գործոց նախարար Զիլհմար Գաբրիէլ, աւելցնելով. «Թուրքիոյ իշխանութիւնները վերջապէս պէտք է հասկնան, որ իրենց քայլերը կրնան շատ լուրջ հետեւանքներ ունենալ»:



Գերմանիոյ Արտաքին գործոց նախարար Զիլհմար Գաբրիէլ

6000 գերմանական ընկերութիւններ կը գործեն:

Զիլհմար Գաբրիէլի խօսքով, Պերլինն իր կողմ մօտեցումը Թուրքիոյ հանդէպ պիտի միայն այն ժամանակ, երբ պաշտօնական Անգարայի վարած քաղաքականութեան մէջ յստակ փոփոխութիւններ նկատուին: «Թուրքիայէն մեր ակնկալիքներն են՝ վերադարձ եւրոպական արժէքներուն, մամուլի, խօսքի, արուեստի ազատութեան հանդէպ յարգանքի ցուցաբերում: Մենք համոզուած ենք, որ Թուրքիոյ հետ լաւ եւ վստահելի յարաբերութիւններու պահպանումը մեր շահերէն կը բխի: Անոր հետ մէկտեղ, սակայն, մենք կը ցանկանանք, որ Թուրքիա Արեւմուտքի բաղաձայնողի մասը դառնայ: Բայց ինչպէս կ'ըսեն. թանկօն միայնակ չեն պարեր», - յայտարարած է Զիլհմար Գաբրիէլ:

Գերմանիոյ Արտաքին գործոց նախարարը, միեւնոյն ժամանակ, «ազնուօրէն խոստովանած է», որ էրտողանի վարչակազմն Արեւմտեան գործընկերներու, մասնաւորապէս, Պերլինի հետ կառուցողական երկխօսութեան մէջ մտնելու ցանկութիւնը, գոնէ այս պահուն, չի ցուցաբերեր: «Յաւոք արտի, ներկայիս թրքական կառավարութեան կողմէ ընդառաջելու պատրաստակամութեան որեւէ նշոյլ չեմ տեսներ: Այդ է պատճառը, որ Գերմանիա ստիպուած է Թուրքիոյ հարցին մէջ նոր քաղաքականութիւն որդեգրել», - ըսած է Զիլհմար Գաբրիէլ:

Պաշտօնական Պերլին Թուրքիոյ նկատմամբ վարուող քաղաքականութիւնը կարծրացնելու որոշում կայացուց այն բանէն ետք, երբ այս շաբթուան սկիզբը Պոլսոյ քրէական դատարանը երկարաձգեց «Amnesty International» կազմակերպութեան 5 Յուլիսին ձերբակալուած իրաւապաշտպաններու կալանքի ժամկէտը: Կալանաւորներու թուին է նաեւ Գերմանիոյ քաղաքացի Փիթըր Շթոյտնը: Վերջին երկու օրերուն Գերմանիոյ կառավարութիւնն աշխոյժ կերպով կը քննարկէր Թուրքիոյ հետ յարաբերութիւններուն մէջ ծագած հերթական ճգնաժամը:

Այս ճգնաժամին պատճառով Գերմանիոյ ԱԳ նախարարը ստիպուած էր ընդհատել արձակուրդն ու շտապ վերադառնալ Պերլին: Ան խորհուրդ տուաւ Գերմանիոյ քաղաքացիներուն, հնարաւորութեան պարագային գերծ մնալ Թուրքիա այցելելէ:

Եւրոպական Դատարանը Սկսած է Քննել

Շարունակուած էջ 1-էն

ուսններու եւրոպական դաշինքի շարք մը յօդուածներու խախտումները, ինչպէս նաեւ գոյքային փոխհատուցում տալ տուժածներուն: Ատրպէյճան ազգային խտրականութիւն դրսեւորած է՝ կեանքէ զրկած է, խոշտանգած է հայ գինուորներն ու խաղաղ բնակիչները, Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանին ուղղուած դիմումներուն մէջ գրած են Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի քաղաքացիները:

Ստրասպուրկի դատարանին մէջ քննուող գործերու շարքին են գլխատուած երեք գինուորականներու գործը, Վալերի եւ Ռազմէլա Խալափեաններու սպանութիւնները:

Մարտակերտի շրջանի Թալիշ գիւղին մէջ ստրպէյճանական ներթափանցող խուճբին կողմէ դաժանաբար սպանուած եւ անարգանքի ենթարկուած էին Խալափե-

եան ընտանիքի երեք տարեց անդամները, որոնցմէ ամէնէն աւագը 92 տարեկան էր:

Լեռնային Ղարաբաղի դատախազութեան տուեալներով, ընդհանուր առմամբ քառօրեայ պատերազմի ընթացքին Պաշտպանութեան Բանակի 19 զինծառայողներու սպանութեան եւ անոնց մարմիններու խոշտանգումներու կապակցութեամբ յարուցուած էր 6 քրէական գործ:

Թէ՛ միջազգային իրաւունքի մասնագէտ Արա Ղազարեան եւ թէ՛ Հայաստանի նախկին ու ներկայ, ինչպէս նաեւ Ղարաբաղի մարդու իրաւունքներու պաշտպանները լրագրողներու հետ հանդիպման ժամանակ պնդած են, որ միջազգային հանրութիւնը պէտք է հասցէական զնահատական տայ Ատրպէյճանի գործողութիւններուն:

Ապրիլեան պատերազմի ժամանակ հայկական կողմը աւելի քան 100 զոհ տուած էր:

Մերօրեայ Փարամազը



Սիրիական ժողովրդավարական ուժերի ու կազմի մէջ մարտեր մղող Լեծվան Փարամազ Մունգուրի

Ամիսներ առաջ «Հայագիտութեան հարցեր» պարբերականի էջերում ընկերը՝ Hayk-ի հետ գրախօսականով* անդրադարձել էինք թուրք գրող եւ հրատարակիչու Kadir Akin-ի «Հայ յեղափոխական Փարամազը» գրքին:

Վերջապէս փոխարէն յիշատակել էինք 2014 թ. Քոբանիի դէպքերի ժամանակ զոհուած քուրդ մի մարտիկի, ով կրում էր «Փարամազ» մարտական կեղծանունը՝ եզրակացնելով, որ «...մահից աւելի քան մէկ դար անց էլ Փարամազի ողիսականը շարունակուած է»:

Եւ ահա յաջորդ դրուագը. թուրքական Gazete Karınca պարբերականն օրերս անդրադարձել էր Ալ-Ռակկան իսլամական պետութեան գինեալներից ազատագրելու համար Սիրիական ժողովրդավարական ուժերի կազմում մարտեր մղող Լեծվան Փարամազ Մունգուրին: 30-ամեայ այս երիտասարդը ծագում հայ է՝ Դերսիմից: Նա թողնելով իր հանգիստ կեանքը Գերմանիայում, կեանքն է վտանգում ահաբեկչութեան դէմ պայքարում:

«Մարդկանց նկատմամբ բռնութեանն ու կոտորածին արդէն չեմ կարող իբրեւ դիտորդ հետեւել: Ընտանիքս Դերսիմից էր եւ հայ: Այնտեղ քրդերն ու միւս ազգերը կոտորած են տեսել 1937-38 թուրքին, այդ թուում՝ հայերը եւ քրիստոնէաները: Ես ժողովուրդների նկատմամբ կատարուածի վրէժն առնելու համար եմ մարտնչում», - ասում է մերօրեայ Փարամազը:

Թուրք Դատախազ. «Եթէ Յեղաշրջումը Յաջողէր, Թուրքիոյ Արեւելեան Կողմը Հայկական Պետութիւն Պիտի Ստեղծուէր»

Թուրքիոյ նախկին ռազմական դատախազ Ահմէթ Չեքի Ուչոք անդրադարձած է այն հարցին, թէ ինչ կրնար տեղի ունենալ, եթէ 2016թ. Յուլիսի 15-ի յեղաշրջման փորձը չձախողէր: Թրքական իշխանամէտ «Yeni Akit» թերթի կայքի տեղեկացմամբ, Ուչոք կարծիք յայտնած է, որ այդ պարագային Թուրքիոյ մէջ արիւնահեղութիւն տեղի պիտի ունենար:



Թուրքիոյ նախկին ռազմական դատախազ Ահմէթ Չեքի Ուչոք

Թուրք դատախազի խօսքով, եթէ յեղաշրջումը յաջողութեամբ աւարտէր, Թուրքիա պիտի մասնատուէր. երկրի հարաւ-արեւելքը քրտական, իսկ արեւելքը՝ հայկական պետութիւններ պիտի ստեղծուէին: Միեւնոյն ժամանակ, Ուչոք տեսակէտ յայտնած է, թէ այդ պարագային Թուրքիա նոյնպէս պիտի անցնէր ԱՄՆ-ի մանդատին տակ:

Թուրքիոյ մէջ ահաբեկչական խմբաւորում համարուող Կիւլէնական համայնքի (FETÖ) անդամներուն դէմ առաջին հետաքննութիւնը յարուցած դատախազը մասնաւորապէս նշած է.

«Թուրքիա պիտի մասնատուէր, յետոյ երկրին մէջ մեծ կոտորածներ պիտի սկսէին: Անոնք ոչ թէ դատարանին առջեւ պիտի կանգնեցնէին, այլ նոյն յեղաշրջման ընթացքին ուղղակի պիտի սպանէին բոլոր անոնք, զորս ընդդիմադիր պիտի համարէին: Իսկ յեղաշրջումէն ետք իշխանութեան եկած նոր դէմքերը անկասկած պիտի ըլլային այն երկիրներու դրածոները, որոնց հետախուզական կառուցներուն հետ անոնք կապուած են»:

Save Support Sustain logo with Syrian Armenian Relief Fund contact info and website.

ԵԱՀԿ Ներկայացուցիչը Կոչը Ըրրած է Թուրքիոյ Ազատ Արձակել Ձերբակալուած Լրագրողները



ԶԼՄ-ներու ազատութեան հարցերով ԵԱՀԿ Ներկայացուցիչ Հարլեմ Տեգիր կոչ կ'ուղղէ Թուրքիոյ՝ ազատ արձակելու ձերբակալուած լրագրողները:

«Ճուճհուրիէթ» օրաթերթի լրագրողներուն եւ խորհուրդի անդամներուն դէմ աչսօր մեկնարկած դատավարութիւնը ցոյց կու տայ, որ Թուրքիոյ մէջ լրագրութիւնը պաշտպանելու եւ ԶԼՄ-ներու ազատութիւնը բարելաւելու անհրաժեշտութիւն կայ. ըսած է ԶԼՄ-ներու ազատութեան հարցերով ԵԱՀԿ Ներկայացուցիչ Հարլեմ Տեգիր:

«Ես ուշադիր պիտի հետեւիմ դատավարութեան, որ պիտի մեկնարկէ այս առաւօտ Սթանպուլի մէջ «Ճուճհուրիէթ» օրաթերթի 17 յայտնի լրագրողներու, խմբագիրներու եւ խորհուրդի անդամներու դէմ, որոնց թուին են Ճան Տուստար, Քատրի Կուրսէլ, Սուրատ Սապանճու եւ Ահմէտ Շըքի, ըսած է Տեգիր: Լրագրութիւնը մեծ դեր կը խաղայ ժողովրդավարութեան յառաջդրման գործին մէջ: Հետեւաբար ես կոչ կ'ուղղեմ Թուրքիոյ հանել մեղադրանքները, ազատ արձակել իրենց աշխատանքը կատարելու համար ձերբակալուած բոլոր լրագրողները եւ ձեռնարկել անհրաժեշտ բարեփոխումներ՝ երկրին մէջ ԶԼՄ-ներու ազատութիւնը պաշտպանելու համար»:

Մեղադրեալներուն, որոնց մեծ մասը կը գտնուի կալանքի տակ 2016 թուականի Հոկտեմբեր եւ Դեկտեմբեր ամիսներէն, կը սպառնայ 7,5-43 տարուայ ազատազրկում: Անոնց մեղադրանք առաջադրուած է կալանաւորումէն աւելի քան 5 ամիս ետք՝ «անօրինական կազմակերպութեան անդամակցելու», «չհանդիսանալով անօրինական կազմակերպութեան անդամ, այդ կազմակերպութեան օժանդակելու» եւ «աշխատանքային գործունէութեան հետ կապուած վստահութեան չարաշահման» մեղադրանքներով:

ԵԱՀԿ Ներկայացուցիչը յիշել տուած է, որ ԵԱՀԿ խստօրէն դատապարտած է անցեալ տարուայ յեղաշրջման փորձը Թուրքիոյ մէջ եւ շեշտած է ժողովրդավարական ճանապարհով ընտրուած իշխանութիւնները պաշտպանելու անհրաժեշտութիւնը:

«Ես լիովին կը հասկնամ անբեկչութեան դէմ պայքարի եւ ազգային անվտանգութեան պահպանութեան մարտահրաւէրը, բայց այն պէտք է իրականացուի յարգելով բոլոր հիմնարար ազատութիւնները, ներառեալ խօսքի ազա-

տութիւնը, ըսած է Տեգիր: Խօսքի ազատութիւնը եւ անվտանգութիւնը պէտք է ըլլան ձեռք ձեռքի՝ որպէս ուժեղ ու ժողովրդավարական հասարակութիւն կերտելու եւ պահպանելու միակ արդիւնաւէտ միջոցները: Ազատ եւ հասանելի ԶԼՄ-ները նոյնպէս կ'ապահովեն դժուար հարցերու շուրջ բանավէճեր՝ գտնելու խաղաղ լուծումներ»:

Տեգիր յաւելեալ մտահոգութիւն յայտնած է նաեւ Թուրքիոյ մէջ խօսքի ազատութեան իրադրութեան առումով, որ կը տարածուի ոչ միայն լրագրողներուն վրայ, այլեւ բոլոր անոնց, որոնք կ'օգտուին խօսքի ազատութեան իրենց իրաւունքէն՝ արտայայտելով քննադատական եւ այլախոհ տեսակէտներ, որոնց թուին հասարակական ցանցերու օգտատէրեր, մարդու իրաւունքներու պաշտպաններ եւ մտաւորականներ: «Ներկայիս արտակարգ իրավիճակի պայմաններուն մէջ ձեռք առնուող միջոցները կը յանգեցնեն անտեղի եւ անհամաչափ ճնշումներու՝ երկրին մէջ խօսքի ազատութեան եւ ԶԼՄ-ներու ազատութեան վրայ, ըսած է Տեգիր: Ես կոչ կ'ուղղեմ իշխանութիւններուն ձեռնարկել մանրակրկիտ քաղաքականութիւն եւ իրաւական բարեփոխումներ՝ խօսքի ազատութիւնը եւ ԶԼՄ-ներու ազատութիւնը պաշտպանելու նպատակով: ԵԱՀԿ պատրաստ է օգնել Թուրքիոյ այս շատ կարեւոր գործընթացն իրականացնելու համար»:

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ Թրքական Միջամտութիւն Բաթարի Տագնապին

Արաբական հինգ երկիրներու կողմէ շրջափակումի ենթարկուած Քաթար՝ տակաւին կը բոլորէ տագնապալից ծանր շրջան մը: Գլխաւոր մեղադրանքն այն է որ «կը քաջալերէ ասաբեկիչները եւ կը զօրակցի իրանին»:

Տագնապի առաջին օրէն սկսեալ, Թուրքիա պատրաստակամութիւն յայտնած էր միջամտելու եւ հաշտեցնելու Քաթարն ու Մոցի Երկիրները: Այս առթիւ Թուրքիա սկսած էր նեցուկ կանգնիլ Քաթարին եւ հնարաւոր բոլոր միջոցներով աջակցիլ անոր, մեղմացնելու համար շրջափակումի վնասները:

Այս առնչութեամբ առաւել գործնական քայլեր առնելով Թուրքիոյ հանրապետութեան նախագահ Ռեճեպ Թայքը Էրտողան անձամբ մեկնեցաւ Մոցի Երկիրներ, տեղւոյն վրայ հաշտութեան եզրեր գտնելու նպատակով: Ան թէ Սէւտական Արաբիա եւ թէ Քուէյթ կատարած այցելութեանց ընթացքին, խօսեցաւ հանդուրժողականութեան եւ հաշտութեան անհրաժեշտութեան մասին: Արդարեւ տագնապի անյապաղ լուծումը պիտի նպաստէ շրջանի կայունութեան:

Առիթէն օգտելուով Էրտողան խօսեցաւ նաեւ Թուրքիոյ եւ շրջանի կարգ մը երկիրներու հետ յարաբերութիւններն ընդարձակելու հարցի մասին:

Քոլերայի Համաճարակ Եմէնի Մէջ

Եմէնի մէջ տիրող աղբատուութեան եւ սովի ու երաշտի պատճառով, ամիսներէ ի վեր քոլերայի համաճարակն սկսած է տարածուիլ եւ աւերներ գործել երկրի բովանդակ տարածքին: Յարդ աւելի քան 275.000 անձեր վարակուած են այս սարսափազդու համաճարակէն: Արդարեւ, Առողջապահութեան Միջազգային կազմակերպութեան տուեալներուն համաձայն Ապրիլ 27էն մինչեւ Յուլիս 5 քոլերայէն մահացողներուն թիւը հասած է 1634ի:

Վերոյիշեալ կազմակերպութեան վերջին հաղորդագրութեան համաձայն մահացողներուն 41 առ հարիւրը 15 տարեկանէն վար երախաներն են, իսկ 60 տարեքէն վեր եղողներն ալ կը կազմեն 33 տոկոսը: Եթէ քոլերայէն վարակուած անձ մը միեւնոյն օրը դարմանումի չի սկսի, շաբաթ մը ետք կրնայ մահանալ:

Ընդհարանպէս քոլերայի վարակը կը տարածուի ըմպելի ջուրի եւ սննդեղէնի միջոցով: Մօտաւորապէս 14,5 միլիոն եմէնցիներ գրկուած են մաքուր ջուր ըմպելու հնարաւորութենէն: Քոլերայի դէմ պայքարելը կարելի է, սակայն միջոցները կը պակսին այդ երկրին համար:

Հրգպալլայի Նոր Յառաջխաղացքը Լիբանան-Սուրիա Սահմանին Վրայ

Հաւաստի աղբիւրներէ կ'մինանաք թէ Հրգպալլայի զինեալները նոր յառաջխաղացք մը արձանագրած են Լիբանան-Սուրիա սահմանամերձ շրջանին վրայ: Արդարեւ Հրգպալլայի շիի զինեալները տարբեր վայրերէ գալով, գրաւած են Արսալի շրջանի վատի Էլ Սէյլ հովիտի սիւննիներով բնակուած տարածքը: Սահմանամերձ այս լեռնային շջանը ժամանակէ մը ի վեր ծառայած է որպէս Ալ Քալիտայի խարխիսներէն մին: Արագօրէն վերագրաւուած այս վայրը մեծ ջաջողութիւն կը նկատուի Հրգպալլայի եւ սուրիական բանակին համար:

Օման Միջնորդ Բաթարի Հարցով

Մոցի երկիրներէն Օմանի արտաքին գործոց նախարարի Ուաշինկթըն տուած այցելութենէն ետք, նախագահ Թրամի խօսակցութիւն մը ունեցաւ Օմանի Սուլթան Գապուս Պիւ Սայիտի հետ: Հաւանական կը նկատուի որ Օման միջնորդութեան դերակատարութիւն մը ընէ Քաթարի եւ Մոցի Երկիրներու միջեւ: Ասկէ առաջ տարբեր պատեհութիւններով Օման յաջող միջնորդութիւններ կատարած էր դրացի երկիրներու միջեւ:

SABAH GUL CHAPTER INVITES YOU TO JOIN & TO ENJOY

Stars By Night

FISH and More

(Catch of the Day)

THE EVENT OF THE YEAR

Will Take Place on:

Saturday, AUGUST 19, 2017
STARTING @ 7:30 PM

ADDRESS:
9537 SHOSHONE AVENUE
NORTHRIDGE, CA 91325

DJ MUSIC - Fish and More
Entrance Donation \$35

Սապահ Կիւ Մասնաճիւղը Կը Հրապիտ

Չուկ Կերոյթի Երեկոյ
Տեղի կ'ունենայ Շաբաթ, 19 ՕԳՈՍՏՈՍ, 2017
Երեկոյեան ժամը 7:30-Էն սկսեալ
Մուտքի նուէր՝ \$35

Հայ Դպրոցականները Միջազգային Առարկայական Ողիմպիադներուն Եւս 6 Մետալ Նուաճած են



«Ուսողութիւն» եւ «Բնագիտութիւն» ուսումնական նիւթերու միջազգային առարկայական ողիմպիադներուն հայ դպրոցականներն արժանացած են 6 մետալի եւ 2 գովասանագիրի: Այս մասին կը տեղեկացնէ ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութեան հասարակայնութեան հետ կապերու եւ տեղեկատուութեան վարչութիւնը:

Ուսողութեան ողիմպիադը տեղի ունեցած է Յուլիսի 12-23-ը Պրագիլի Ռիօ տէ ժանէրօ քաղաքին մէջ: ՀՀ խումբը, զոր կը ղեկավարէին Սմբատ Գոգեան (ՀՀ ԳԱԱ) եւ Տիգրան Մարգարեան (ԱՇահինեանի անուան ֆիզմաթ յատուկ դպրոց), արժանացած է 2-ական արծաթէ (Միքայէլ Մկրտչեան, 12-րդ դասարան եւ Գագիկ Մաղաքեան, 10-րդ դասարան) ու պրոնզէ / Սերկէյ Ներսիսեան, 12-րդ դասարան եւ Վահան Մարտիրոսեան, 11-րդ դասարան/ մետալի եւ 1 գովասանագիրի (Կարապետեան Վահէ, 11-րդ դասարան): Բոլոր աշակերտները Ա. Շահինեանի անուան ֆիզմաթ յատուկ դպրոցի սաներն են: Բնագիտութեան ողիմպիադին,

որ տեղի ունեցած է Յուլիսի 16-24-ը Ինտոնէզիոյ ձոքիաքարթա քաղաքին մէջ, մեր աշակերտները վաստակած են մէկական արծաթէ (Դաւիթ Գեորգեան, ԱՇահինեանի անուան ֆիզմաթ յատուկ դպրոց, 11-րդ դասարան) ու պրոնզէ (Խաչատուր Նազարեան, ԱՇահինեանի անուան ֆիզմաթ յատուկ դպրոց, 12-րդ դասարան) մետալ եւ 1 գովասանագիր (Միքայէլ Շիրազարեան, «Քիմիա» վարժարան, 11-րդ դասարան): Խումբը կը ղեկավարէին Գագիկ Գրիգորեան եւ Բիլոր Կուրդիւնեան, որոնք կը դասաւանդեն «ԱՅԲ» եւ Ա. Շահինեանի անուան ֆիզմաթ յատուկ դպրոցներուն մէջ:

Յուլիսի 6-15 թաիլանտի Նախոմ-Փաթոմ քաղաքին մէջ կայացած «Քիմիա»ի դպրոցականներու միջազգային ողիմպիադին Հայաստանի խումբը շահած էր երկու պրոնզէ մետալ եւ մէկ գովասանագիր: Նշենք, որ յաջորդ ողիմպիադը տեղի պիտի ունենայ «Կենսաբանութիւն» ոլորտին մէջ, Յուլիսի 23-30, Բրիտանիոյ Քովենթրի քաղաքին մէջ:

Ռուսաստանցի Ծրագրաւորող Մարք Վարդանեան ԱՄՆ-ի Մէջ Դատապարտուեցաւ Հինգ Տարուայ Ազատազրկման

Ռուսաստանցի Մարք Վարդանեան ԱՄՆ-ի մէջ ազատազրկման դատապարտուած է համակարգչային վիրուսային ծրագիր մշակելու, կատարելագործելու համար, որուն օգնութեամբ ցանցահենները աշխարհի բազում երկիրներու համակարգիչներէ անձնական եւ ֆինանսական տեղեկութիւններ գողցած են: Ըստ հետաքննութեան, անոր կողմէ կատարելագործուած «Citadel» վիրուսային ծրագիրով 11 միլիոն համակարգիչ վարակուած է, պատճառուած վնասը գնահատուած է մօտաւորապէս 500 միլիոն տոլար:



19 Յուլիսին ԱՄՆ-ի մէջ Աթլանթայի դատարանը Վարդանեանը մեղաւոր ճանչցած է եւ դատապարտած հինգ տարուայ ազատազրկման: Երկու տարին ան արդէն բանտին մէջ անցկացուցած է՝ Նորուէկիոյ մէջ 2014 թուականին ձերբակալուելէն ի վեր: ԱՄՆ-ի յատուկ ծառայութիւնները հետեւած էին վիրուսային ծրագիրով կատարուող մեքենայութիւններուն եւ յայտնաբերած զինք: Ուաշինկթըն պահանջած էր Վարդանեանը եանձնել ԱՄՆ-ին: Նորուէկիոյ իշխանութիւնները

դատական երկու ատեաններու լուծմանէն ետք զինք արտաեանցնած էին Միացեալ Նահանգներուն:

Վարդանեան ընդունած էր իր մեղքը, համագործակցած հետաքննութեան հետ, որպէսզի փոքր պատժաչափ ստանայ:

Մարք Վարդանեան «Citadel»ի գործով դատապարտուած երկրորդ անձն է՝ 2015-ին ռուսաստանցի Տմիթրի Պելոռոսով ազատազրկման դատապարտուած էր «Citadel» վիրուսային ծրագիրը համակարգիչներու վրայ տարածելուն համար:

Arabian Night
Սրաբակաս Երեկոյ

Կազմակերպութեամբ՝
ԿԼԵՆՏԵՅԼԻ Ա.Դ.Հ.Կ.
ԱՐՄԷՆ ԿԻՏՈՒՐ ՄԱՍՆԱԾԻՒՂԻՆ

Երեկոն կը խանդաւարէ՝
D.J. Alex • Darbuka Specialist Mark Elkhoury

ՀԱԾԵԼԻ ԱՆՍԱԿՆԿԱԼՆԵՐ

ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 29, 2017
Երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ
Raffi's Banquet Hall սրահին մէջ
3887 E. Sierra Madre Blvd., Pasadena, CA 91107

Մուտքի նուէր՝ \$50
Տոմսեր ապահովելու համար հեռաձայնել
Կարօ (818) 913-4024 • Աւօ (818) 913-9311

LET'S CELEBRATE

You Are Cordially Invited

AGBU
WESTERN DISTRICT
GALA 2017

Saturday
SEPTEMBER 9, 2017


<p>OUTDOOR COCKTAIL RECEPTION 7PM</p> <p>DINNER 8PM</p>	<p>UNIVERSAL STUDIOS HOLLYWOOD</p> <p>THE GLOBE THEATRE 100 UNIVERSAL CITY PLAZA UNIVERSAL CITY, CA 91608 (FRANKENSTEIN PARKING LOT)</p>
---	--

FOR TICKETS CALL 626-794-7942
OR EMAIL GALA@AGBUCA.ORG

<p>GENERAL ADMISSION \$250</p> <p>#AGBUGALA2017</p>	<p>YOUNG PROFESSIONALS \$125</p> <p>@AGBU_WDC</p>
---	---

RESERVE BY AUG. 18, 2017

Թռչունը Վանդակէն Խոյս Տուալ



ՎԱՐՂԱՆ ԷՍՏՈՒԿԵԱՆ

Եթէ իբրեւ գիտութիւն իրաւաբանութիւնը իր ամենադժուար ժամանակը կը բոլորէ Թուրքիոյ մէջ այդ երեւոյթի վառ ապացոյցներէն մէկն ալ Սեւան Նշանեանի ծիծաղաշարժ դատապարտութիւնն էր: Այլախոհ այս ծանօթ մտաւորականը 2014-ի Յունուար ամիսէն այս կողմէ կը մնայ արգելանոցի մէջ, իբրեւ թէ իր սեփական հողին վրայ ապօրէն կերպով շինութիւն կառուցած ըլլայ: Թրքերէնին մէջ կայ նման երեւոյթները նկարագրող ասացուածք մը՝ «ճուտիկներն ալ կը ծիծաղեն»: Արդարեւ ամէն ոք զիտէ թէ Նշանեանի բանտարկութեան բուն պատճառը իր իրաւաբան ելոյթներն են:

Վերջապէս այս ծիծաղաշարժ բաց դռն բանտարկութիւնը իր աւարտին հասաւ Նշանեանի Չմիւնիոյ մերձակայ Փոքայի բանտէն փախուստով: Նշենք որ Փոքայի բանտը բաւական ազատութիւններ ընդձեռող կառուց մըն է, որուն բնակիչները մերթ մերթ կրնան դուրս ելլել ու ապա վերադառնալ: Ահա այս վերջինն էր որ չէր եղած այս անգամ, քանի որ Սեւան Նշանեան դուրս ելած եւ սակայն անգամ մըն ալ ետ չէր վերադարձած:

Նշանեան իր փախուստը յայտարարեց «Թուրքիոյ վանդակէն թռաւ, տարոսը մնացեալ 80 միլիոնին» նախադասութեամբ: Փախուստէն ետք կապ հաստատեցինք այլախոհ մտաւորականի հետ, որ պատասխանեց «Ակօս»ի հարցումներուն:

Վարդան Էստուգեան-Կառավարութեան մօտ ի՞նչ տեսակ ազդեցութիւն մը գործած է ձեր փախուստը: Սեւան Նշանեան-Շիրինճէի մէջ իմ մղած պայքարը պետութեան ըմբոստանալ ըլլալով ընկալուեցաւ: Այդ ալ պատճառ դարձաւ որ «պետութիւն» կոչուած օլիգարխներու համակարգը իր ամբողջ ուն ու ատելութիւնը ուղղէ իմ վրայ: Սակայն ես շարունակած

Նրա կարծիքով՝ Հայաստանում շատ ունեւոր մարդիկ կան, որոնց համար չնչին գումար է մանկապարտէզի կամ որեւէ դպրոցի վերանորոգումը:

«Այս երեխաները մեր ապագան են, եթէ ուսումնասիրենք պատմութիւնը, ապա կը տեսնենք, որ մեր ժողովրդի ամենամեծ տաղանդներն աղքատ եւ անապահով ընտանքներից

շատերը կը գան Հայաստան կամ ցանկութիւն կ'ունենան օգնելու»:

Անդրադառնալով Հայաստանում առկայ առաջնահերթ խնդիրներին սփիւռքահայերի աջքերով՝ Յ. Բալայեանը շեշտեց, որ ունենալով հնադարեան պատմութիւն եւ շատ տեսարժան վայրեր,

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՇՈՒՆՉ ՍԸ ՍԻՏՆԻ ՍԷՋ



ՍԱՐԳԻՍ ՍԱՆՈՒԿԵԱՆ

2 Յունիս 2017 թվականը Աստուածաշնչական էր ՀԲԸՄ-ի Սիտնիի Մասնաճիւղի Ա. Մանուկեան Մշակութային կեդրոնին ներս, ուր կազմակերպվեց ՀԲԸՄ-ի եւ Աւստրալիոյ Հայ Աւետարանչական Ընկերակցութեան միասնական ջանքերով դասախօսութեամբ հանդէս եկաւ Տոքթ. Հրայր ձեպէճեան, մեր օրերու «Պօղոս առաքեալը», որ գործի առաքելութեամբ հասած էր այս հեռավոր ովկիանոսի ափերը, իր պաշտօնին բերումով, որպէս Աստուածաշունչի Ընկերութեան Մոցի երկիրներու ընդհանուր քարտուղար:

Հրայր ձեպէճեանի աշխատանքը իր ասպարէզին մէջ, ինչպէս նաեւ հայրենական, ազգային ճակատին վրայ քաջ ծանօթ է եւ անկասկած սիրուած, յարգուած, փնտրուած եւ մանաւանդ գնահատուած: Իր այցելութիւնը հաճելի անակնկալ մըն էր շատերուն, մանաւանդ անոնց համար, որոնք առիթը ունեցած են զինք մօտէն ճանչնալու եւ երկար տարիներու թաւալումէն վերջ կրկին հանդիպելու: Լեռը՝ լեռան ոչ, բայց մարդը՝ մարդուն վաղ թէ ուշ անպայման կը հանդիպի: Հրայր ձեպէճեան մեր օրերու իսկական ծիծեռնակը, արագիւրը, կռունկը դարձած է անոնց փոխանցուած ազգային-ժողովրդական արժանիքներով եւ դարձած Սփիւռք-Հայաստան կամուրջ: Հակառակ իր բազմազբաղ վիճակին, բայց հաւատարիմ իր անհատնում պատրաստակամութեան եւ ազգային նուիրումին, առիթ ստեղծեց դասախօսական այս երեկոյին եւ հանդէս եկաւ Սփիւռքահայ իրականութիւններ-տարբերութիւններ եւ հասարակաց հիմնահարցեր՝ լայնածաւալ նիւթով:

Երեկոյի հանդիսութեան բացումը, պատշաճ բարի գալուստով, կատարեց ՀԲԸՄ-ի Սիտնիի Մասնաճիւղի Վարիչ Տնօրէն Սարգիս Մանուկեան, ապա հրաւիրուեցաւ վերապատուելի Գրիգոր Եղմուշազեան ներկայացնելու օրուայ բանախօսը որոշ կենսագրական գիծերով: ձեպէճեանի եւ Եղմուշազեանի ծանօթութիւնը, բարեկամութիւնը սկսած է վաղ պատանեկան տարիներէն եւ ապա վերածուած մտերմութեան, համագործակցութեան եւ բնականաբար «Եղբայր ի Քրիստոս» նոյն առաքելութեան ծիրէն ներս:

Միջին Արեւելքը կրակ ժայթքող խառնարան մըն է, սակայն հոսող լաւաքին տակ չեն ծածկուիր բոլոր երեւելի եւ աներեւոյթ հարցերը, այլ ընդհակառակը կը բազմապատկուին առ երես գալով եւ շատ հաւանաբար, մանաւանդ հա-

յորդիններ, տարբեր երկրամասերու մէջ եւ պայմաններու տակ, ունին որոշակի եւ շատ յաճախ իւրայատուկ մեկնաբանութիւն եւ նոյնիսկ ակնյայտ հետեւանք ու վճիռ: Տոքթ. Հ. ձեպէճեան բառին բուն իմաստով լաւատես է. Բայց առանց իր իրապաշտութիւնը կորսնցնելու նուազագոյն նշույլով իսկ եւ ամբողջ դասախօսութիւնը ընթացաւ այդպէս:

Յետ Յեղասպանութեան 100ամեայ գողգոթայի խաչմերուկին շատերը յուսահատած են եւ ունին արդէն վճիռներ: ձեպէճեան կը թելադրէ չաճապարել եւ մանաւանդ Հայլէպը կամ Սիրիահայութիւնը որպէս անդէնականի գրանցում չկատարել, բայց համբերել եւ մտածել օգնութեան եւ վերակերտումի միջոցներու եւ դրական լուծումներու մասին: Որպէս Աստուածավախ, հայրենասէր կը հաւատայ նախախնամութեան եւ ձեպէճեանի համոզումը, մտածելակերպը, գործելակերպը փոխանցել է եւ ներշնչումի աղբիւր:

Սփիւռք հասկացողութիւնը պէտք է սահմանափակուի Միջին Արեւելքի տարածաշրջանի սահմաններով հասկցուց ձեպէճեան: Սփիւռքը այսօր միջազգային է եւ ունի ոչ միայն քաղաքական-տնտեսական առաւելութիւններ, թերութիւններ այլ նաեւ լեզուական, մշակութային, սկսած կեդրոնական Ասիայէն մինչեւ Հարաւային Ամերիկա տարբեր ժողովուրդներու համար եւս:

Շրջանի տազնապը քաղաքական-տնտեսական եւ գիտութեան ըլլալով հանդերձ ունի նաեւ անհատական բնոյթ, ինքնագիտակցութեան ուղիով պայքար, պոռթկում, ընդվզում եւ ազատութեան ձգտում եւ նոյնիսկ հեղաշրջելու եւ տիրապետելու մղում ոչ անպայման փոփոխութիւն դէպի դրական, կենսական եւ շինիչ նպատակներով եւ հետեւաբար ձեպէճեանի համար այս կրօնա-ազգային եւ քաղաքագաղափարական բախումը, մանաւանդ նոր սերունդին մօտ՝ անխուսափելի, նկատի առնելով նաեւ գիտական, ընկերային եւ հաղորդակցութեան, լրատուական մատչելի բոլոր հնարաւորութիւնները: Բնականաբար այս ամէնը ծնունդ տուած են նաեւ զօրաւոր ազգայնականութեան որ զգալի կերպով կարելի է տեսնել հեռավոր ափերու վրայ հաստատուած, ոչ անպայման հայախօս հայորդիներու մօտ, որ իր փորձառութեամբ եւ վկայութեամբ մատնանշեց: Պահանջը անսպառ է, սակայն պայմանները եւ միջոցները հաւասարապէս տրամադրելի են, մեր մտաւեւեւումը պէտք է չեղի եւ հայակերտումը,

ՋԵՄԱԼԻ ՓԱՇԱՅԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՎՐԻԺԱՌՈՒԹԻՒՆԻՑ 95 ՏԱՐԻ ԱՆՑ ՑԵՂԱՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՍԱՆ ՋԵՄԱԼԻ ԴԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՐՄԵՆ ԳԵՈՐԳԵԱՆԻ ԽՈՐԵՐԸ



Հասան Ջեմալ

Այս օրերուն լրանում է 1915 թվականի Մեծ եղեռնի կազմակերպիչներին եւ իրականացնողներին մեկի՝ Ջեմալ փաշայի նկատմամբ հաշուեյարդար 95-րդ տարին: 1922 թվականի Յունիսի 21-ին հայ վրիժառուներ՝ Արտաշէս Գէորգեանը, Պետրոս Տէր-Պօղոսեանը եւ Ստեփան Ծաղիկեանը Թիֆլիսում իրականացրեցին 1919թ. Յունիսի 5-ի Ստամբուլի ռազմական արտակարգ ատենախմբի մահապատժի դատավճիռը Թուրքիայի ռազմածովային ուժերի նախարար Ջեմալ փաշայի նկատմամբ: «Արմենյալես»-ի թղթակիցը գրուցեց վրիժառուներից մէկի՝ Արտաշէս Գէորգեանի թոռան՝ Արմէն Գէորգեանի հետ՝ փորձելով որոշ մանրամասներ պարզել Ջեմալ փաշայի թոռան՝ գրող, հրապարակախօս



Արմէն Գեորգեան

Հասան Ջեմալի հետ ունեցած հանդիպումից, նրա հետ ունեցած գրույցների տպաւորութիւններից, հայ եւ թուրք հասարակութիւնների շրջանում փոխըմբռնման աւելի բարձր մակարդակի հասնելու եւ այլ հարցերի շուրջ:

«Պարոն Գէորգեան, Դուք 2008 եւ 2014 թվականներին հանդիպումներ էք ունեցել Ջեմալի թոռան՝ Հասան Ջեմալի հետ, ի՞նչ զգացիք, երբ առաջին անգամ տեսաք նրան:

«Հենց առաջին հանդիպմանը ես նրա մօտ շփոթութիւն եւ յուզմունք նկատեցի, որն աւելի շատ էր, քան ինձ մօտ: Ես հասկացայ, որ Հասանը այն թուրքերից է, ովքեր յստակ գիտակցում են իրենց նախ-

JENNY'S IMMIGRATION & SOCIAL SERVICES

Հաստատութեան տնօրէն եւ հայ համայնքին տարիներ շարունակ օգնութիւն ցուցաբերած փորձառու ԴԵՆԻ Արաբահամեանը շարունակում է օգտակար լինել մեր հայրենակիցներին կառավարութեան կողմից գաղթականութեան փաստաթղթերի, հիւանդութեան, բոշակների եւ պետական օգնութեան ձեւակերպման անհրաժեշտ ծառայութիւններով:

Քաղաքացիութեան Կեդրոն

**1436 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91201
Tel: (818) 242-8196 Fax: (818) 937-9120**

-Բոլոր ճանապարհներով Green Card եւ այլ գաղթականական ծառայութիւններ -Եթէ երբեւէ ունեցել էք խնդիրներ, որը կարող է ձեզ խանգարել քաղաքացիութեան հարցով, մի մտահոգուէք, մենք ձեզ կ'օգնենք ...


Passport and Immigration Photos

Ծառայութիւններ

- Հեշտ եւ կարճ ճանապարհով հիւանդութեան բոշակ SSI-SSA
- Medi-Cal
- CAPI, Sponsor-ով կամ առանց Sponsor-ի

LIVE SCANS

Fingerprinting



Jenny Abrahamian
Թարգմանութիւններ՝ Հայերէն, Անգլերէն, Արաբերէն, Ռուսերէն, Պարսկերէն եւ այլն -Լիազօրագրեր/ Appostille

Նոտար/Notary

Վստահեցէք մեր տարիներու փորձառութեան եւ արդար աշխատանքին

Չեր գաղթականական եւ այլ հարցերու շուրջ ամէն հարցումի պատասխանը մեր մօտ կը գտնուի (Section 8, խնամակալ, եւ այլն)

ՄԵԿ ԱՍՍՈՒԱՆ ՄԵՋ ՍԵՒԱՆԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ 7 ՄՍ. ԻՋԱԾ Է



Բնապահպանները կասկածի տակ կը դնեն կառավարութեան հաւաստիացումները, թէ 270 միլիոն խմ ջրառի պարագային կրնայ ապահովուիլ ջուրի մակարդակի դրական հաշուեկշիռ, չիշեցնելով, որ նախորդ երկու պարագաներուն՝ 2012 եւ 2014 թուականներուն կատարուած յաւելեալ ջրառի հետեւանքով ջուրի մակարդակի բացասական նիշեր արձանագրուած են:

Սեւանէն կատարուած ջրառի հետեւանքով լիճի մակարդակը մօտ մէկ ամսուան մէջ (20 Յունիսէն մինչեւ 17 Յուլիս) 7 սմ իջած է: Այս մասին «Ազատութեան» տեղեկացուցած է «Էկոլոլը» հասարակական կազմակերպութեան ղեկավար բնապահպան Ինգա Չարաֆեան, ընդգծելով, որ պատճառը ջրառի «մեծ չափերն են»:

Սեւանէն ջուր դուրս բերելու տարեկան թոյլատրելի քանակը 170 միլիոն խորանարդ մեթր է: Սակայն կառավարութեան առաջարկով խորհրդարանն այս ամսուայ սկիզբը համապատասխան օրէնքին մէջ փոփոխութիւն կատարելով թոյլ տուած է լիճէն լրացուցիչ 100 միլիոն խորանարդ մեթր ջուր դուրս բերել, այս տարուայ ջրառի ընդհանուր ծաւալը հասցնելով 270 միլիոն խորանարդ մեթրի:

Ինգա Չարաֆեանին փոխանցմամբ, որպէսզի իրացնեն այդքան մեծ ծաւալի ջուրը, թոյլատրուած ջրառն այժմ մեծ թափով կ'իրականացուի, որուն հետեւանքով «արդէն ունինք Սեւանի մակարդակի՝ 7 սմ իջեցում»: Բնապահպանը չբացառեց, որ սահմանուած չափով ջրառի իրականացման հետեւանքով ջուրի մակարդակն աւելի պիտի իջնէ:

«Էկոլոլը» կազմակերպութեան կայքին հրատարակուած տուեալներուն համաձայն, այս տարի Սեւանայ լիճի մակարդակի ամենաբարձր նիշը կազմած է 1900 մ 91 սմ, ջրառի հետեւանքով 17 Յուլիսի դրութեամբ այն նուազած է 1900 մ. 84 սմ-ի: Արդեօք այս վտանգաւոր ցուցանիշն է, «Ազատութեան» այս հարցին ի պատասխան՝ ՀՀ նախագահի կարգադրութեամբ ստեղծուած՝ Սեւանի հարցերով յանձնաժողովի անդամ, Կենդանաբանութեան եւ հիտրոէքոլոգիայի գիտական կեդրոնի Բարդուղ Գաբրիէլեան ըսած է, թէ

կարելոր է, որ Սեւանի ջուրի մակարդակին հետ կապուած դրական հաշուեկշիռ ունենանք տարեվերջին:

«Այլապէս մենք կը կանգնենք փաստի առաջ՝ կ'ունենանք ջրի վատացում, ինչը յետագայում կարող է նոյնիսկ բերել ճահճացման: Ինչ վերաբերում է այդ 7 սանթիմեթրին, հիմա թէժ ժամանակ է, հիմնական ջրառը, փաստօրէն, հիմա է կատարուում, ուղղակի պէտք է հետեւել, որ իրենք չգերազանցեն պլանաւորուածը, որ դա չբերի բացասական պալանսի», - յայտնած է Բարդուղ Գաբրիէլեան:

Յիշեցնենք, որ կառավարութիւնը խորհրդարանին մէջ տեղի ունեցած քննարկումներու ժամանակ խոստացած էր, որ լրացուցիչ ջրառի պատճառով պիտի չխախտուի Սեւանայ լիճի ջուրի մակարդակի՝ օրէնքով սահմանուած դրական հաշուեկշիռը: Թէեւ լրացուցիչ 100 միլիոն խմ ջրաքանակ դուրս բերելու պարագային լիճի մակարդակը կրնայ իջնել մինչեւ 8 սմ-ի չափ, բայց նոյնիսկ այդ պարագային, ըստ կառավարութեան, պիտի պահպանուի ջուրի մակարդակի՝ շուրջ 10 սմ-ով բարձր անհրաժեշտ բարձր նիշը:

Բնապահպանները կասկածի տակ կը դնեն կառավարութեան հաւաստիացումները, թէ 270 միլիոն խմ ջրառի պարագային կրնայ ապահովուիլ ջուրի մակարդակի դրական հաշուեկշիռ, չիշեցնելով, որ նախորդ երկու պարագաներուն՝ 2012 եւ 2014 թուականներուն կատարուած յաւելեալ ջրառի հետեւանքով ջուրի մակարդակի բացասական նիշեր արձանագրուած են:

Յիշեցնենք նաեւ, որ բնապահպանութեան դաշնակցական նախարար Արծուիկ Մինասեան նոյնպէս սկզբնապէս առարկութիւններ ներկայացուցած էր Սեւանէն յաւելեալ 100 միլիոն խորանարդ մեթր ջուր դուրս բերելու կառավարութեան նախագիծին հետ կապուած: Ընդ որում, խորհրդարանական յանձնաժողովին մէջ կառավարութեան առաջարկի քննարկման ժամանակ ՀՅԴ անոր դէմ քուէարկած էր: Աւելի ուշ, սակայն, իշխանական դաշնութեան մաս կազմող ՀՅԴ-ի ներկայացուցիչ նախարարը յայտարարեց, որ փոխած են իրենց դիրքորոշումը:

ԱՅՍ ՏԱՐԻ ԿՐ ՊԵՂՈՒԵՆ ԵՐԵՔ ՏԱՍՆԵԱԿԻՑ ԱՒԵԼԻ ՅՆԱԳԻՏԱԿԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ.



Գիտութիւնների ազգային ակադեմիայի Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի անօրէն Պաւել Աւետիսեանի փոխանցմամբ՝ այս տարի միաժամանակ մի քանի տասնեակ յուշարձաններ են պեղուելու. - «33 յայտ ենք ներկայացրել Մշակույթի նախարարութեանը եւ 35 տարբեր յուշարձաններում դաշտային հետազոտական աշխատանքներ ենք կատարելու»:

Դրանք շատ վաղ ժամանակաշրջանի յուշարձաններ են, որոնք շատ կարելոր են առհասարակ մարդկութեան պատմութեան ուսումնասիրութեան համար, եւ համաշխարհային գիտական հանրութիւնը չպիտի զարմանան յետոյ: «Այսինքն յուշարձանների մի մեծ խումբ ուսումնասիրում ենք՝ հասկանալու համար, թէ հարիւր հազարաւոր կամ միլիոնաւոր տարիներ առաջ նախամարդը ինչպէս է բնակեցրել այս տարածքները: Ընդ որում, էստեղ մենք ունենք յուշարձաններ, որոնց ուսումնասիրութեան արդիւնքները առանցքային նշանակութիւն ունեն հասկանալու համար, թէ ընդհանրապէս ինչպէս է բնակեցուել Եւրասիան»:

Օրինակ, Կոտայքի մարզի Նոր Գեղի գիւղի շրջակայքում յայտնաբերուած յուշարձանի պեղումների արդիւնքները ցոյց են տալիս, որ ուշ հոմօ էրեկտուսը կամ վաղ հոմօ սապիենսը՝ վաղ բնակական մարդը, ոչ թէ Աֆրիկայից է դուրս եկել, ինչպէս պիտուած է միջազգային գիտական հանրութեան կողմից, այլ հենց Եւրասիայում է ձեւաւորուել, աւելին՝ հենց մեր տարածքում. - «Կար տեսակէտ, որ էդ մարդիկ Աֆրիկայից են դուրս եկել, եւ էդ մարդկանց թողած գործիքները իւրայատուկ են, Եւրասիայում որտեղ տեսնում էին այդ գործիքները, ասում էին՝ ահա, այս լեւալոսագեան տեխնիկայով արուած գործիքները պատրաստել են այն մարդիկ, որոնք դուրս են եկել Աֆրիկայից: Մեր Նոր Գեղի ուսումնասիրութիւնները ցոյց տուցին, որ դրանք կարող էին տեղում լինել, տեղից զարգանալ, աւելի վաղ ժամանակների քարի ինդուստրիայի ժամանագործներն են»:

325-330 հազար տարուայ պատմութիւն ունեցող յուշարձանի պեղման արդիւնքների ուսումնասիրութիւնները հրատարակուել են հեղինակավոր Science ամսագրում,

եւ ինչպէս նշում է Պաւել Աւետիսեանը, այլ՝ ամենաբարձր յղման գործակից ունեցող գիտական ամսագրերում - «Առաջին անգամ հայաստանեան նիւթը էնպիսի տուեալներ է տուել, որ փոխում է գիտութեան մէջ եղած, կարծրացած տեսակէտները որ էդ մարդիկ ձեւաւորուել են Աֆրիկայում եւ Աֆրիկայից են տարածուել ամբողջ Եւրասիայում: Եւ հիմա կշարունակենք այդ աշխատանքները, այնտեղ նորից շերտեր ենք գտել, աւելի խորը կը գնանք, աւելի վաղ ժամանակների մասին պատկերացում կ'ունենանք»:

Այս տարի հնագէտները, ի թիւս այլ պեղավայրերի, կ'աշխատեն նաեւ Սիսիանի մօտ գտնուող Աղիտուր գիւղի հնավայրում, որտեղ արդէն իսկ գտնուել են հոմօ սապիենսի 30-40 հազար տարուայ վաղեմութեան հետքեր: Հնագէտները յոյս ունեն պեղումների արդիւնքում ամբողջական պատկերացում կազմել, թէ ինչպէս է բնակական մարդը զբաղեցրել այս տարածքները:

Այս տարի կը շարունակուեն նաեւ Էջմիածնի հարեւանութեամբ վերին խաթունար գիւղի Ակնաչէն հնավայրի պեղումները, դա նեոլիթեան ժամանակաշրջանի բնակատեղի է: Կը շարունակուեն նաեւ Երեւանի հարեւանութեամբ գտնուող Մասիս գիւղի Մասիս Բլուր կոչուող հնավայրի պեղումները հնավայրը մ.թ.ա. 7-րդ հազարեակին է պատկանում:

Այս պեղաշրջանի ընթացքում շարունակուելու է նաեւ վիշապքարակոթողների պեղումների ծրագիրը, որն իրականացնում է հայգերմանական արշաւախումբը Արագած լեռան փեշերին: Ամէն տարի նորանոր վիշապքարակոթողներ են յայտնաբերուում. - «Սա նոյնպէս բացառիկ հետաքրքիր ծրագիր է: Սա Առաջաւալ քանդակագործութեան եզակի նմուշների ուսումնասիրութեան ծրագիր է: Այդ վիշապքարակոթողները հանդիպում են միայն Հայկական լեռնաշխարհի սահմաններում: Մենք վիշապքարակոթողներ ունենք, որ տեղաշաժուել են խորհրդային իշխանութեան տարիներին, միջնադարում դրանք վերածուել են խաչքարերի, յետոյ վերածուել են տապանաքարերի... վանի թաղաւորները այդ քարերի վրայ թողել են արձանագրութիւններ: Գառնիում գտել ենք մենք. էդպէս պարզեցինք, որ դա աւելի վաղ է, քան Ուրարտուն»:

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

ՎԵՑ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՅ ԵՒ ԿԱՊՈՒԱԾՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

Եթէ կը կասկածիք՝ արդեօք իսկապէս կը սիրէք ձեր ընտրեալը, թէ կապուածութիւն կը զգաք անոր նկատմամբ, ուրեմն ուշադիր կարդացէք այս վեց կէտերը: Անոնք կ'օգնեն ստանալու ձեզ տանջող հարցին պատասխանը:

-Սէրը կիրք է, իսկ կապուածութիւնը՝ անտարբերութիւն:

Այստեղ խօսքը բաժանման ժամանակ զոյգերու պահուածքին մասին է:

Կ'ըսեն՝ սիրելէն ատելութիւն մէկ քայլ է. ուստի, սիրող զոյգերու պարագային բաժանման ժամանակ սիրող զեղեցիկ զգացումը կը վերածուի ատելութեան: Իսկ եթէ զոյգերու միջեւ կապուածութիւն է, ուրեմն բաժնուելու պահուն անոնք անտարբեր պիտի ըլլան եւ անգամ չզայրանան:

-Սէրը անվերապահ է, իսկ կապուածութիւնը՝ եսասիրական. Սիրող զոյգերը անվերապահօրէն կը նուիրուին իրարու: Զոյգերէն ամէն մէկուն համար միւսին պահանջներն ու ցանկութիւնները սեփականէն վեր կը դասուին: Իսկ կապուածութեան ժամանակ զոյգերը եսասիրական մտեցում կը ցուցաբերեն իրարու հանդէպ:

-Սէրը բարդ է, իսկ կապուածութիւնը բարդ է, երբ միասին էք. իրական սիրոյ պարագային ամէն ինչ շատ դժուար է: Կը թուի՝ ամէն ինչ պէտք է գեղեցիկ ու պարզ ըլլայ, բայց կեանքը իր օրէնքները կը թելադրէ, եւ սիրող զոյգերը պէտք է մշտապէս պայքարին իրարու կողքին ըլլալու համար: Իսկ կապուածութեան պարագային զոյգերը պարզապէս կը մտածեն, թէ շաբաթը քանի անգամ պիտի հանդիպին: Այս պարագային յարաբերութիւնները

չեն գարգանար եւ թմրանիւթի նման՝ ազդեցութիւնը վաղ թէ ուշ կ'անցնի:

-Սէրը ազատութիւն է, իսկ կապուածութիւնը՝ բանտարկութիւն. Երբ դուք կը սիրէք, չէք մտածեր սիրած էակը մշտապէս ձեր տեսադաշտին մէջ պահելու մասին: Պէտք չկայ զգացումները հասկնալու համար ամէն վայրկեան իրարու հետ ըլլալ:

Իսկ երբ զոյգերը կապուած են իրարու, իրական սիրոյ զգացում չկայ, քանի որ անոնք այդ սէրը կը զգան միայն իրարու ներկայութեան պարագային:

-Սէրը կ'ընդլայնէ սահմանները, իսկ կապուածութիւնը՝ կը սահմանափակէ: Իրական սէրէն բացի, ոչինչ այս աշխարհի վրայ չի կրնար ամենագորութեան զգացում յառաջացնել զոյգերուն մօտ: Սէրը նոր շունչ եւ ուժ կու տայ ձեզի, եւ դուք պատրաստ էք գրաւելու ամբողջ աշխարհը:

Իսկ կապուածութեան պարագային սէրը կը վերածուի իշխանութեան համար պայքարի: Զոյգերէն ամէն մէկը կ'ուզէ հաւաստիանալ, որ յարաբերութիւններու «դեկ»-ը իր ձեռքն է:

-Սէրը յաւերժ է, իսկ կապուածութիւնը՝ ժամանակաւոր. Երբ դուք իսկապէս կը սիրէք, ուրեմն ձեր սէրը յաւերժ է: Նոյնիսկ եթէ յարաբերութիւնները այլ ընթացք կը ստանան, եւ զոյգը կը բաժնուի, միեւնոյնն է, ան կը մնայ ձեր կեանքի միակ սէրը: Իսկ կապուածութեան պարագային զոյգերը նման զգացումներ չեն ապրիր: Անոնց կապուածութիւնը ժամանակաւոր է, իսկ յարաբերութիւնները՝ կեղծ:

ԵՐԿԱՐԱՍԵՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Մտածած էք բնաւ, թէ ինչո՞ւ որոշ զոյգերու սէրը տարիներու ընթացքին աւելի կ'ամրապնդուի, իսկ ուրիշներ յաճախակի տարաձայնութիւններ կ'ունենան: Որոնք են երկարատեւ յարաբերութիւններու գաղտնիքները.

1. Հաւատարմութիւն. Իրական յարաբերութիւններու հիմքը հաւատարմութիւնն է, որ ամուսնութեան եւ սիրոյ գրաւականն է: Հաւատարմ մարդոց համար փոխադարձ վստահութիւնն ու նուիրուածութիւնը աւելի կարեւոր է, քան տարաձայնութիւններն ու նման այլ մանրուքները:

2. Շփում. Երկարատեւ յարաբերութիւններ հաստատելու հարցով շփումը մեծ դեր ունի: Պէտք է մոռնալ բոլոր տեսակի էլէկտրոնային սարքերու մասին եւ հան-

գիստ խօսակցիլ: Անկեղծ շփումը յարաբերութիւններու մէջ վստահութեան եւ երջանկութեան հիմքն է: Եթէ շփում չկայ, զոյգերը չեն կրնար երկար ապրիլ իրարու հետ:

3. Կայունութիւն. Արիստոտէլ ըսած է. «Մենք մեր մշտապէս կատարուող գործերն ենք: Ուստի, կատարելութիւնը ոչ թէ գործողութիւն, այլ՝ սովորութիւն է»: Ճիշդ եւ երկարատեւ յարաբերութիւններու գաղտնիքը կայունութիւնն է: Եթէ ամուսինները իրենց գուզնկերով հետաքրքրութիւնները սեփականէն վեր կը դասեն եւ կը փորձեն իրենց ներդրումը ունենալ յարաբերութիւններու կայունութեան մէջ, ուրեմն անոնց սէրը յարատեւ պիտի ըլլայ եւ ժամանակի ընթացքին անիկա միայն պիտի ամրապնդուի:

ՍՈՒՐԾԻ ԲՈՒԺԻՉ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սուրճի հայրենիքը Եթովպիան է, ուր պահպանուած են անոր վայրի մացառուտները: Սուրճի ծառը առաջին անգամ նկարագրած է գերմանացի բժիշկ Ռաուվելֆը (1573 թուականին): Արեւմտեան Հայաստանի մէջ սուրճի ըմպելին տարածուած է 16-րդ դարու սկիզբը: Հետաքրքրական է, որ 1672-ին Ֆրանսայի մէջ բացուած առաջին սրճարանին տէրը՝ Փասկալ անուսով, հայ եղած է:

Հիւսիսային Ամերիկայի մէջ սուրճ օգտագործած են 1670-ին: Սուրճը կը մշակուի 17-րդ դարէն Եմենի մէջ: Այդ երկրի Մոգոնաւահանգիստէն անիկա արտահանուած է աշխարհով մէկ: 20-րդ դարու սկիզբը սուրճ տեղափոխող նաւերէն մէկուն բեռնախցիկը փոթորկի պատճառով ջուրով լեցուած է: Բեռնաթափուելէն յետոյ նկատած են, որ այդ սուրճէն պատրաստուած ըմպելիի ազդեցութիւնը աւելի թույլ է: Այդ պատահականութեան շնորհիւ սուրճը ստացած է աւելի մեծ տարածում, քանի որ քաֆէինի փոքր տոկոս պարունակող սուրճը կրնային խմել նաեւ առողջական խնդիրներ ունեցող մարդիկ: Եւ այսպէս, եթէ կ'ուզէք տնային պայմաններու մէջ նուազեցնել քաֆէինի տոկոսը, ուստի հատիկները որոշ ժամանակ պահեցէ՛ք ջուրի մէջ: Քիչ անց անոնք պիտի ուռին: Զուրէն առանձնացուցէ՛ք հատիկները եւ լուացէ՛ք հոտը ջուրի տակ: Քաֆէինի պարունակութիւնը չմշակուած հատիկներուն մէջ կը տատանուի:

Լուծուող սուրճի մէջ քաֆէինի պարունակութիւնը աւելի բարձր է: Որոշ հետազոտողներ կը հաւաստիացնեն, որ լուծուող սուրճը բարենպաստ ներգործութիւն ունի մարմնի վրայ, որ անիկա ցանկալի է խմել կաթի կամ սերուցքի հետ խառնած վիճակով, սակայն ոչ անօթի ստամոքսին: Սուրճէն պատրաստուած ըմպելիները արտաշատուած բարերար ազդեցութիւն ունին հիփոթետիկով հիւանդներու վրայ: Ժխտական ազդեցութիւն կ'ունենան սիրտ-անօթային որոշ հիւանդութիւններու, 12-մատնեայ աղիքի եւ ստամոքսի խոցի պարագային: Որեւէ հիւանդութեան պարագային սուրճի չափաբաժինը պէտք է որոշէ բժիշկը: Սուրճը կը պարունակէ քաֆէին (1,2%), ջուր (12%), շաքարանիւթեր (8%), սրճաթթու (9%), քլորֆենիլ (25%), ազոթային միացութիւններ (13%), ֆենոլային միացութիւններ, պիրիդին, քացախաթթու, վիթամին PP, E եւ այլ նիւթեր: Բովելէն յետոյ ճարպերու,



ազոթային միացութիւններու եւ քաֆէինի պարունակութիւնը քիչ մը կ'աւելնայ, իսկ ջուրի, շաքարի, սրճաթթուի պարունակութիւնը կ'իջնէ 2-4 անգամ: Նիւթերը (վիթամին PP) կը մասնակցի ուժանիւթի արտադրման բջիջներուն մէջ: Սուրճը կը նուազեցնէ քրոնիթերով եւ ճարպի պարունակութիւնը արեան մէջ, կը լայնցնէ արիւնատար անօթները եւ կ'իջեցնէ ճնշումը, կը հանգստացնէ գլխացաւը, կը վերացնէ աղմուկը ականջներուն մէջ, օգտակար է գլխապտոյտի պարագային, կը բարելաւէ մարսողութիւնը, կը կանխէ սրտի կաթուածները:

Խորհուրդ կը տրուի քրոնիկ հիւանդութիւններու՝ լեարդի ցիրուցի, չարորակ ուռուցքներու, յատկապէս շագանակագեղձի ատենումայի, փանքրէատի պարագային: Քաֆէինի ցած պարունակութիւնը առանձնապէս չ'ազդեր սուրճի բարերար յատկութիւններուն վրայ: Նիւթերը կ'օգնէ նաեւ յոգնածութեան, մկանային թուլութեան, վատ խորթակի, սթոմախիտի, լինտերու հիւանդութիւններու, սրտխառնուքի պարագային: Կը վերացնէ բերանի տհաճ համը եւ հոտը:

Սիսեռը շատ լաւ կը համակցուի սուրճի հետ, կ'աւելցնէ սուրճի օգտակար ազդեցութիւնը: Սուրճի եւ սիսեռի յարաբերութիւնը խառնուրդի մէջ կ'որոշէ խմողը: Շատ կարեւոր է նիւթերի հետեւեալ յատկութիւնը. Կը նպաստէ սերժինի արտադրութեան, կը պարզեւէ առողջ քուն եւ երջանկութեան զգացողութիւն: Վերջերս հետազոտութիւններու միջոցով պարզուած է, որ սուրճի լուծամզուածքը (իւրային, ջրային, սփիթային) կը բերէ թուրքի արտադրութեան յառաջացող կազերու նուազում: Այդ կազերը բաւական տհաճ հոտ ունին: Սովորական ձեւով պատրաստուած սեւ սուրճը չի յանգեցնէր նման արդիւնքի: Գիտնականները փորձեր կը կատարեն, որպէսզի ստանան տհաճ հոտերը վերացնող բուրմունք՝ սուրճի հատիկներէն:

ԻՆՉ ԿԱՐԵԼԻ Է ԸՆԵԼ ՉՏԻՐԵԼՈՒ ԶԱՍԱՐ

Կ'ուզէ՞ք ամէն օր լաւ տրամադրութիւն ունենալ: Շատ դիւրին է, պէտք է հետեւիլ հետեւեալ խորհուրդներուն.

- 1) Քնանալու պահուն մտածեցէ՛ք միայն լաւ բաներու մասին: Այդ պարագային դուք պիտի կարենաք լաւ տրամադրութեամբ քնանալ, եւ յաջորդ օրը անցնել դրական մթնոլորտի մէջ:
- 2) Մի՛ կեղրոնանաք այն

ամէնուն վրայ, որոնք կը փճացնեն ձեր տրամադրութիւնը, բայց ոչ մէկ ձեւով կարելի է փոխել:

3) Ծրագրեցէ՛ք որեւէ հաճելի բան: Թէկուզ եթէ անոր հասնելու համար շաքարներ կամ նոյնիսկ ամիսներ պահանջուին ձեզմէ: Հաւատացէ՛ք, հաճելի սպասումը այդ ամբողջ ընթացքին ձեզի պիտի օգնէ վայելելու իւրաքանչիւր օրը:

OFFICE SPACE FOR RENT IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԽԱԶԻԿ ԸԱՆՈՅԵԱՆԻ ՅԵՏ

Շարունակուած էջ 13-էն

նութիւն, թալան, եւ կողոպուտ, որուն կ'ենթարկուէին մեր հայրենակիցները):

Գալով հարցումի առաջին բաժնին, ամենայն հպարտութեամբ կրնանք ըսել, թէ Լոս Անճելոսի հայերը մեծագոյն գնահատանքով մօտեցան մեզի եւ իրենց նիւթական եւ բարոյական նպաստն ու ներդրումը տուին այս ծրագրին: Արդարեւ, մեր աշխատանքին մեծագոյն բարերարները եղան ոչ իրաքահայեր, այլ իրանահայերը, լիբանանահայերը, սուրիահայերը եւ հայաստանցիներ, որոնք իրենց նիւթական եւ բարոյական նպաստով սատար հանդիսացան մը գործին:

Ա. Բ. Ի՞նչ արձագանգ գտաւ ձեր նախաձեռնութիւնը Իրաքում, Միջին Արեւելքի հայ համայնքներում եւ Հայաստանում:

Խ. Ճ. Իրաքի մէջ Հայ Առաքելական Եկեղեցւոյ Առաջնորդը, եւ որոշ քաղաքական գործիչներ դէմ էին այս ներգաղթին, պատճառաբանելով որ այսպիսի քայլով գաղութը կը նօսրանայ եւ արիւնաքամ պիտի ըլլայ: Յաճախ շատ կոպիտ արտայայտութիւններ լսեցինք, ինչպէս՝ «Եթէ Հայաստանը լաւ է, դուք ինչո՞ւ չէք երթար ու հոն ապրիր»: «Ինչո՞ւ մարդոց դժբախտութեան պատճառ կ'ըլլաք զանոնք Հայաստան տանելով»: Եւ այլ վիրաւորական խօսքեր: Դժբախտաբար այսպիսի արտայայտութիւններ մեզի եղան: Բայց մենք խորապէս հասկնալով անոնց ցաւը, գաղութը տկարանալուն համար, հասկացողութեամբ մօտեցանք հարցին եւ կրցանք ոմանց համոզել, որ իրաքահայերը, անոնք որոնք կրցան եւ կրնան դուրս ելլել արդէն իրաքէն դուրս կ'ապրին, իսկ մնացածները շատ ծանր եւ դժուար պայմաններու տակ են, եւ ոչ ոք կ'ուզէ իրաքահայ գաղութը քայքայել, իսկ 100-150 հոգի Հայաստան տանելով, անոնք մէկ փոքր մասնիկն են մօտ 10,000-է աւելի արդէն իսկ դուրս փախչող հայ զանգուածին, մանաւանդ որ մենք մեր տարած հայերուն օրապահիկ մէկ տարի ապահոված ենք եւ հայրենի պետութիւնը եւ հայրենի ներգաղթի բաժնի վրայ ոչ մէկ բեռ պիտի ըլլան անոնք եւ հայրենի պետական այրերը ջերմօրէն ընդունած են իրաքահայ գաղթականները:

Ա. Բ. Ի՞նչ արձագանգ գտաւ ձեր այս նախաձեռնութիւնը Իրաքում, Միջին Արեւելքի հայ համայնքներում եւ Հայաստանում:

Խ. Ճ. Ոչ մէկ խոչընդոտի հանդիպեցաւ այս նախաձեռնութիւնը: Մենք մեր աշխատանքներու եւ բարերարներուն կողմէ գոյացած գումարները գոյացնելու ոչ մէկ դժուարութիւններ ունեցանք:

Փառք ու պատիւ մեր գաղութի անդամներուն, մեծատունն իր գանձով, համեստ աշխատակորները իրենց լուծմաներով սատար եւ օժանդակ եղան մեր աշխատանքին անհատական ձեւով կամ որոշ միութիւններու աշխատանքով:

Կարելի չէ այս աշխատանքը չիշել, առանց երախտագիտութեամբ չիշելու պարսկահայ գործատէր, KIA ինքնաշարժի նախկին ներկայացուցիչ Տիար Օննիկ Մեհրաբեանի օժանդակութիւնը: Այս պարոնը մեզի մէկ ինքնաշարժ նուիրեց, որ վիճակահանութեան դրինք եւ մօտ 80,000 տոլար գոյացուցինք: Մեր

իրաքահայ բարերարներ Մարգարեան եղբայրները, Յարութիւն Հիւլալեան, ձոնի Թաճիրեան, Վարանդ Մելքոնեան, Պերճ Շահպազեան, Երուսաղէմի Թարգմանչաց վարժարանի Սանուց միութիւնը, իրանահայերու միութիւնը, Զաւէն Խանճեան, Թոմիկ Ալեքսանեան, Նունէ Աւետիսեան, Թագուհի Արզումանեան, Շահէ Քէօրողլեան, Վրէժ Աղաջանեան, մեր շատ սիրելի Յովհաննէս Բալայեան եւ Հ.Օ.Մ.ի նախաձեռնութեամբ կազմուած իրաքահայերու Օգնութեան Միացեալ Մարմին կողմէ մեզի 10,000 տոլար տրուեցաւ եւ այլն:

Ա. Բ. Ի՞նչ չափանիշներով եր հիմնադրամն ընտրուի այն իրաքահայերին, որոնց աջակցում էր Հայաստան տեղափոխել:

Խ. Ճ. Ոչ մէկ չափանիշ կամ պայման կար, իրաքահայու մը նպաստ տալ Հայաստան տեղափոխուելու համար, բայց միշտ նկատի առած ենք եւ նախապատուութիւն տուած էինք այն երիտասարդ ընտանիքներուն, որոնք անչափահաս զաւակներ ունին, այլապէս առանձին ապրող տարիքաւորները բարեխտաբար կրնային Պաղատի ծերանոցի մէջ տեղաւորուիլ եւ ապահով ըլլալ:

Ա. Բ. Հայաստան տեղափոխուելուց յետոյ արդեօք Ձեր հիմնադրամը ցուցաբերո՞ւմ էր այլ (հոգեբանական, սոցիալական) աջակցութիւն:

Խ. Ճ. Որպէս փոքր եւ համեստ կարողութիւններով միութիւն մը նման ծառայութիւններ հայթայեղու ոչ նիւթական եւ ոչ ալ փորձառութիւն ունինք նման հոգեբանական կամ ընկերային օժանդակութիւններ հասցնելու: Բայց մենք ունինք մեր ներկայացուցիչը, որ նոր ժամանած գաղթականներու նախապէս կահաւորուած տուններ կը վարձէր եւ հոն կը տեղափոխէր: Անոնց գաղթականական, դպրոցական, ընկերային հարցերուն օգտակար կ'ըլլայ եւ անոնց գործերը կ'ընեն, մինչ մեր իրաքահայերը, ինչպէս նախապէս չիշեցի, շատ գոհ էին Գայանէ Մուրատեանի ծառայութիւններէն: Բայց հոգեբանական աջակցութիւն տալու ի վիճակի չէինք:

Ա. Բ. Ձեր հիմնադրամի օգնութեամբ Հայաստան տեղափոխուած իրաքահայերը մնացել են Հայաստանում, թէ՛ գաղթել են այլ երկիրներ: Քանի՞ս են մնացել Հայաստանում եւ քանի՞սը տեղափոխուել են այլ երկիրներ:

Խ. Ճ. Մեր միութեան միջոցաւ տեղափոխուած 135 հայերէն, մեզի հասած տեղեկութիւններու համաձայն, մօտ 55 հոգի Հայաստանէն մեկնած են այլ երկիրներ, միանալու համար իրենց հարազատներուն հետ: Անոնց մեծ մասը եւրոպական երկիրներ մեկնած են, մէկ-երկու ընտանիք Ա.Մ.Ն. եկել են, իսկ մօտ 80 հոգի, մեր ունեցած տեղեկութեանց համաձայն, Հայաստան մնացած են: Անոնք հոն մեր միութեան նման (իրաքահայերու ընտանեկան Միութիւն) մը հիմնած են Երեւանի մէջ:

Մինչեւ մեր 135 հոգինոց խումբը Հայաստան տանիլը, ոչ ոք կը մտածէր Հայաստան երթալ եւ հաստատուիլ հոն, քանի որ իրաքահայերու մօտ տարածուած էր, որ Հայաստան գործ չկայ, ժողովուրդը շատ դժուար պայմաններու մէջ է եւ վախ, կասկած ունէին Հայաստան երթալու եւ ապրելու համար: Սակայն մեր ներգաղթի աշխատանքով եւ ապրուստ ապահովելով, անոնց ներկայութեան քաջալերումով, մեզի հասած տեղեկութիւններու համաձայն 800-1,000 աւելի իրաքահայեր Հայաստան հաստատուած են, որոնք վերջնականապէս փրկուած են, ապահով եւ անկաշկանդ մայր հայրենիքի ժողովուրդին հետ շատ լաւ շագուած իրենց երջանիկ ապագան կը կերտեն մայր հողին վրայ: Նոյնիսկ Ա.Մ.Ն.-էն իրաքահայեր Հայաստան տեղափոխուած են: Անոնք իրենց սեփական տունները եւ գործերը ծախելով, կամ անոնք իրենց կենսաթոշակները Հայաստան ստանալով, իրենց գործերը բացած են այնտեղ:

Ոչ մէկ իրաքահայ բեռ չէ եղած Հայաստանի իշխանութեանց վրայ, այլ անոնք իրենց երջանիկ կեանքը դասաւորած են իրենց միջոցներով, բայց հայրենի պետութիւնը ու մանաւանդ գաղթականներու բաժինը եւ Սփիւռքի նախարարուհի դոկտ. Հրանուշ Յակոբեան միշտ հասած են իրաքահայերուն:

Ա. Բ. Ի՞նչ օրագիրը չի շարունակուում:

Խ. Ճ. Նախ ներկայիս իրաքի հայութեան կեանքը այդքան վտանգաւոր ու անապահով չէ, որ քան 2003-ին քանի մը տարի անց: Հիմա իրաքի հայերը արդէն իրենց անձնական միջոցներով կրնան Հայաստան երթալ եւ հոն հաստատուիլ, անկաշկանդ եւ առանց նիւթականի կարիք ունենալու: Հիմա աւելի շատ իրաքահայեր հաստատուիլ սկսած են իրաքի հիւսիսային Քիւրտիստանի շրջանին մէջ, քիւրտ ժողովուրդի եւ իշխանութեան բոլոր բարիքները եւ օգնութիւնները վայելելով:

Մեր սրտագին կոչն է, որ մեր ազգային կուսակցութիւնները, եկեղեցիները եւ ժողովուրդը ընդհանրապէս, նման աշխատանք մը որդեգրեն ներգաղթ կազմակերպելով, իւրաքանչիւր գաղթող ընտանիքի ապրուստը մէկ-երկու տարի ապահովելու բարերարներ գտնելով, որպէսզի այս գաղթականները մէկ-երկու տարուան ընթացքին իրենք զիրենք գտնեն եւ վստահ են, անոնք կը մտածեն Հայաստան մնալ:

Ա. Բ. Ներկայիս ի՞նչ աջակցութիւն է ցուցաբերում Լոս Անճելոսի իրաքահայերի հիմնադրամը Հայաստանում հաստատուած իրաքահայերին, իրաքի հայ համայնքին:

Խ. Ճ. Ներգաղթի աշխատանքէն ետք, միութիւնը երեք տարի շարունակ 8-10 հազար տոլարի նպաստ հասցուց Հայաստան ապրող իրաքահայերուն: Սկիզբը տօնական օրերուն իւրաքանչիւր ընտանիք, ըստ զաւակներու թիւին, նիւթական նուէրներ ղրկեցին, վերջին երկու տարիներուն, անոնց զաւակներուն տարին 40-60 փոքրիկներու կրթաթոշակներ ղրկած ենք: Հիմա դադարեցուցած ենք այդ նպաստը, քանի որ մեր միութիւնը հոս Լոս

Անճելոսի մէջ, կրթական, մշակութային բազմերես ծառայութիւններ նախաձեռնած է: Ունինք մեր շաքարեայ ՁՐԻ վարժարանը, այս տարի մաս կազմած ենք տասնեակ մը մշակութային եւ մեծաբանքի երեկոներու, պարահանդէսներու, գիրքերու գինեձօներու եւ այլն:

Կարելի չէ այս հարցազրոյցը փակել առանց չիշելու թէ վերոնշեալ աշխատանքները իրաքահայերու միութիւնը կազմակերպեց «Իրաքահայերու Օգնութեան Հիմնադրամ» անունով յանձնախումբ կազմակերպելով: Այս յանձնախումբի ատենապետն էր Սարգիս Դերձակեան, որ երեք անգամ Հայաստան գացած է, հոն մօտ ամիս մը մնալով այս գաղթականները իրենց համար վարձուած տուններու մէջ տեղաւորած է, գաղթականներու գրասենեակի հետ Հալէպէն դասաւորած է Հալէպ գացող եւ հոնկէ Երեւան մեկնող խումբին տոմսակներ ապահոված է եւ այլն: Յանձնախումբի գանձապահն էր ողբ. Գրիգոր Տէր Ամիրեան, որ այս աշխատանքի գլխաւոր ճարտարապետը եւ գաղափարը յղացողն էր: Յանձնախումբի միւս անդամներէն է Ռաֆֆի Կարապետեան փոխ-ատենապետ, ատենադպրուհիներ Մարալ Շահինեան, Ազատուհի Աբրահամեան, Սերոբ Թշապուրեան եւ վարդգէս Պետրոսեան, իսկ Խաչիկ Ճանոյեան իրաքահայերու կեդրոնական վարչութեան նախագահի հանգամանքով այս յանձնախումբի բոլոր աշխատանքներուն եւ որոշումներուն վերահսկիչն էր:

Վերջաւորութեան, իրաքահայերու կազմակերպած ազգահաւաքի այս համեստ աշխատանքը իրապէս մեծագույն նպաստած է մեր ժողովուրդի ներգաղթի աշխատանքներուն: Քաջ գիտենք, որ ներկայիս Հայաստանի բարեխտամ կառավարութիւնը միջոցներ կ'որոնէ ներգաղթը քաջալերելու համար:

Կ'ըսեն մեծ ծառերը փոքր հունտերէ ծնունդ կ'առնեն: Վստահ են ներգաղթի մեծ աշխատանքը փոքր գաղափարներէ եւ աշխատանքներէ կրնան ծնունդ առնել եւ պտուղներ տալ: Մեր մաղթանքն է, որ հայրենի եւ սփիւռքի ղեկավարութիւնը ՍԿՍԻՆ ազգահաւաքի այս սուրբ, անհրաժեշտ եւ պատուական գործը իրականացնել, յօգուտ եւ ի փառս մեր հայրենիքին եւ ժողովուրդին:

Ա. Բ. Շնորհակալութիւն, պարոն ճանոյեան, այս շահեկան հարցազրոյցի համար: Իրապէս հերոսական եւ պատուաբեր գործ տարած է Ձեր միութիւնը: Վստահ են, այս աշխատանքը ոսկի տառերով պիտի արձանագրուի մեր ժողովուրդի պատմութեան էջերուն մէջ:


Հարցազրոյցը վարեց՝ ԱՆՈՒԷ ԲԵԺԱՆԵԱՆ

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՅ
ՓԱՍՍԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ԻՐԱՆԱՅԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ՄԱՐԸ

Անցնող շաբաթ, Թեհրան քաղաքին մէջ 83 տարեկան հասակին իր մահկանացուն կնքած է իրանահայ շնորհալի բանաստեղծ, իրանահայ Գրողներու Միութեան անդամ, Թեհրանի «Հանդիպում» գրական խմբակին մաս կազմող Փանոս Վարդանեանը: Ան վեց գիրքերու հեղինակ էր եւ լայն ճանաչում գտած Հայաստանի եւ սփիւռքահայ գաղթօճախներուն մէջ: Փանոս Վարդանեան աշխատակցած էր շուրջ 30 հայկական թերթերու եւ հանդէսներու: Իր բազմաթիւ քերթնածները ցարդ տպագրուած են «Մասիս»-ի էջերուն մէջ: Իր մահով իրանահայ գրական անդամները զգալի կորուստ ունեցաւ: Խորապէս կը ցաւակցինք հանգուցեալի զաւակներուն՝ Վարուժին, Մերուժանին (Թեհրան) Դերենիկին՝ (Կլենտէյլ) բոլոր ազգականներուն եւ գրչակից ընկերներուն:

«Մասիս» եւս կը ցաւակցի իր աշխատակցին մահը:



ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՔԵԱՆԻ մահուան տխուր առթիւ Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Քնար Պողարեան եւ զաւակները իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն՝ յատկապէս կնոջ Ժիւհէյնային եւ զաւակներուն Ալիսին, Թալինին եւ Յովիկին:

ՁԵՄԱԼԻ ՓԱՇԱՅԻ ՆԿԱՏՄԱՍԲ

Շարունակուած էջ 15-էն

նինքնի մեղքը եւ ցանկանում են ազատուել այդ ժառանգուած մեղքի զգացողութիւնից: Հասանք ասում էր ինձ, որ այդ հանդիպումներն աւելի շատ իրեն են անհրաժեշտ՝ չնայեա՞ծ այն հանգամանքին, որ նա յատուկ գիտակցում էր, որ իր երկիր վերադառնալուց յետոյ ստիպուած է լինելու պատասխան տալ, թէ ի՞նչու է իրեն ստիպել Հայաստան գալ եւ հանդիպել Ձեմալ փաշային սպանողի հետ: Սակայն հանդիպելու եւ ցեղասպանութեան թեմայի շուրջ խօսելու նախաձեռնութիւնը Հասանին էր: Ես զգացի մի շատ կարեւոր բան, դա այն էր, որ Հասանի հետ շփումն ինձ թոյլ տուեց հասկանալ, որ թուրքերն ամենաշատը վախենում են հենց ցեղասպանութեան մասին խօսելուց եւ բարձրաձայնելուց:

-Որո՞ւք էին հանդիպումների եւ գրոյցների ժամանակ քննարկուող հարցերը:
-Նախ եւ առաջ կը ցանկանայի նշել, որ Հասանը փորձում էր իր խօսքերի մէջ անկեղծ լինել եւ ցանկանում էր հասկանալ, թէ որքանո՞վ են հայ եւ թուրք հասարակութիւնները պատրաստ երկխօսութեան: Այն, որ Հասանը քաջ գիտակցում էր իր նախնիների գործած մեղքը եւ զղջում դրա համար, դա միանշանակ: Սակայն նրա հետ մի քանի անգամ շփուելուց յետոյ ես հասկացայ, որ իրականում հենց այդ երկխօսութեան հարցն է կարեւոր: Խօսակցութիւնների ընթացքում, բացի նրանից, որ խօսում էինք ցեղասպանութեան վէրքերի եւ հետեւանքների մասին, զրուցում էինք նաեւ ցեղասպանութեան կազմակերպման եւ իրականացման պատճառների մասին: Հանդիպումներից մէկի ժամանակ նա նշեց, միգրացի ես եւ ինքը պատրաստ ենք, սակայն, հայ եւ թուրք հասարակութիւնների միջեւ դեռեւս չկայ խոր երկխօսութեան գնալու վստահութիւնը:
-Ներկայումս շարունակու՞մ էք շփումները Հասանի հետ եւ նախա-

տեսու՞մ էք ինչ-որ մի նոր հանդիպում ունենալ նրա հետ:

-Այո, շարունակում եմ: Մենք մշտապէս կապի մէջ ենք, եւ ես, անգամ, այսօր մտադիր եմ նրան նամակ յղել, քանի որ այս օրը բացասական եւ դրական իմաստներով նշանակալի է ինչպէս ինձ, այնպէս էլ նրա համար: Ինչ վերաբերում է նրա հետ եւս մէկ անգամ հանդիպելու ծրագրեր ունենալու հարցին, ապա կարող եմ պատասխանել, որ դեռեւս կրկնուած չեմ որոշել երբ, սակայն նման ծրագրեր իսկապէս ունեմ, առաւել եւս այն դէպքում, երբ հենց Հասանն է ինձ յաճախակի թուրքիա հրաւիրում:

-Ի՞նչ էք կարծում, ինչ արդյունքներ ունեցան Հասանի այդ այցելութիւնները եւ Ձեզ հետ ունեցած հանդիպումներն ինչպէս հայ, այնպէս էլ թուրք հասարակութեան վրայ:

-Կարծում եմ, որ այդ իրադարձութիւնն իսկապէս կարեւոր էր առաջին հերթին հենց ազգերի միջեւ երկխօսութեան տեսանկիւնից: Այս առումով գտնում եմ, որ այդ հանդիպումները ինչ-որ տեղ կարելի է դէպի այդ երկխօսութիւն տանող ճանապարհի մի փոքրիկ մասը համարել: Իմ կարծիքով հանդիպումները որոշակի ակտիւութիւն հարուցեցին այն հարցին, թէ մեր հասարակութիւնը որքանո՞վ է հետաքրքրուած ցեղասպանութեան իրականացման պատճառներով եւ թուրք ժողովրդի հետ ապագա երկխօսութեան հասնելով: Պետք է ասեմ, որ Հասանի ունեցած հանդիպումներից յետոյ այդ հետաքրքրութիւնը բաւականին աճել էր մեր հասարակութեան շրջանում, քանի որ դրանից յետոյ ինձ յաճախ փողոցում ճանաչում եւ բազմաթիւ հարցեր էին տալիս ինչպէս Հասանի խօսքերից, այնպէս էլ նրա հետ ունեցած մեր գրոյցներից: Ինչպէս յետագայում այլ թուրք ծանոթներից, ինչպէս նաեւ Հասանից պարզեցի, նման դէպքեր են տեղի ունեցել նաեւ իրենց հետ:

Դաւիթ Մամեան

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՇՈՒՆՉ ՄԸ ՍԻՏՆԻ ՍԷՋ

Շարունակուած էջ 15-էն

հայապահպանումը պէտք է շարունակուի: Ճէպէճեան կը հաւատայ որ կրնաս լաւ, հոյակապ հայ ըլլալ առանց լեզուն խօսելու, բայց միեւնոյն ժամանակ կը նախընտրէ անշուտ եթէ հայախօս մնաս այս խառնարանին մէջ:

Տոքթ Ճէպէճեան հարց պատասխանի ընթացքին, կրկին անդրադառնալով տարածաշրջանին մասին ընդգծեց որ Սուրիոյ պարագային եւ ընդհանրապէս, թշնամին այսօր աներեւոյթ է կամ նման է Լիբանանեան մօտիկ անցեալի քաղաքացիական պատերազմին եւ կամ այլ մղուած ճակատներու: Հակամարտութիւնները առկայ են նաեւ ոչ միայն քաղաքական հոսանքներու, այլ նաեւ կրօնական համաման դաւանանքներու միջեւ:

Սփիւռքահայ իրականութիւնները, հիմնահարցերը երիտասարդ հայրենիքի կողքին ինչպէս նաեւ Արցախի, Ճէպէճեանի համար գուճահեռ կ'ընթանան, որոնք կարիք ունին (մեր մեկնաբանութեանը) ոչ կացինահար լուծումներու այլ սղոցային՝ առնելով եւ տալով միշտ հայրենիքը եւ Արցախը ի մտի ունենալով եւ ի վեր դասելով: Այս ուղղութեամբ հաճելի էր լսել նաեւ Ճէպէճեանի ներդրումը մանաւանդ Աստուածաշունչի Ընկերակցութեան եւ անհատական աշխատանքով տարուած օժանդակութիւններուն մասին եւ անոնց կողքին

Աստուածաշունչի թարգմանութեան եւ տպագրութեան տարբեր ծրագիրները, մանաւանդ մանկական Աստուածաշունչի մօտալուտ պատրաստութիւնը եւ հրատարակութիւնը 5000 տպաքանակով որ պիտի բաշխուի դպրոցներու եւ պատանիներու: Լուր մը որ բնականաբար ընդունուեցաւ ծափողոյններով եւ նկատի առնելով Աստուածաշունչի առաջին տպագրութեան 350ամեակի տօնակատարութիւնները Սցիտնիի մէջ, տրուեցան նմանութիւններ Ոսկան Երեւանցիի հետ:

Վասն Յիսուսի եւ վասն հայրենեաց սէրը, օգնութիւնը մեծ է եւ կը շարունակուի:

Չարմանալի է իր Առաջնորդ սրբազան հայրը՝ Գերշ. Տէր Հայկազուն եպս. Նաճարեան իր եզրափակիչ խօսքին մէջ, անդրադառնալով օրուայ հրատապ՝ կրօնական-ազգային հարցերու մասին որպէս հետեւանք դասախօսութեան ընթացքին արծարծուած կէտերուն, Ճէպէճեանը որակեց, Վարդանանց ոգիով ներշնչուած Ղեւոնդ Երէց: Վարձքդ կատար եղբայր Ճէպէճեան:

Թեթեւ հիւրասիրութեան ընթացքին, տրամադրուած ՀԲԸՄ-ի կողմէ, ներկաներ առիթ ունեցան աւելի մօտէն ծանօթանալու եւ գրուեցելու Տոքթ. Հրայր Ճէպէճեանի հետ:

Եւ եղեւ երեկոյ եւ եղեւ լրումն ... եւ տեսին հայրդիք զի բարի է եւ տուն Թորգոմեան ցեղի կայ ի վերայ ժայռի:

ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՍ

Շարունակուած էջ 14-էն

այնուամենայնիւ Հայաստանը չի հետաքրքրում օտարերկրեայ զբօսաշրջիկներին, քանի որ այստեղ չկայ յարմարաւէտութիւն, նորմալ հանգիստ անցկացնելու համար անհրաժեշտ պայմաններ:

«Չհաշուած որոշ բացառութիւններ, Երեւանից դուրս գտնուող ճանապարհները խայտառակ վիճակում են: Հիւսիս-հարաւ մայրուղին հսկայական նշանակութիւն կարող է ունենալ Հայաստանի համար, ափսոս որ շատ դանդաղ է կառուցուած: Երեւանը դարձրել են հիւրանոցների, խաղատների, ճաշարանների, գիշերային «հաճոյալից» ակումբների քաղաք:

Թուրիզմ գրաւելու ամենակարեւոր պայմաններից են Ա) Հանգիստ առաւտապատ ճանապարհներ, Բ) Հանգստեան վայրեր, ներառեալ գուգարաններ:

Յաւաբ սրտի վերոյիշեալ շատ

կենսական հարցերը անտեսած են, եւ անվերջ այդ ուղղութեամբ թուրիստները իրենց դժգոհութիւններն են յայտնում:

Օրինակի համար, Արագածի գագաթ բարձրացող բարւոք ճանապարհը կը նպաստէր Հայաստանի այդ գեղատեսիլ վայրը բազմահազար զբօսաշրջիկների այցելութիւնը, սակայն, աւաղ, այս ճանապարհը եւս ողբալի վիճակում է: Անձամբ փորձեցի:

Շրջաններում գտնուող հնադարեան վանքերի վերանորոգումը թողած՝ Երեւանում արհեստական եկեղեցիներ են կառուցուած: Հայաստանը միայն Երեւանը չէ, մինչդեռ Հայաստանի հեռավոր շրջաններում գտնուող վանքերը վերանորոգելով, մենք զբօսաշրջիկների հոսք կարող ենք ապահովել այդ վայրերը՝ այդպիսով նպաստելով նաեւ գիւղացիների կեանքի որակի բարելամանը», - եզրափակեց Յովհաննէս Բալայեանը:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State: ----- Zip Code: -----
Country: -----
Tel: ----- Email: -----

Յենյարն ու «ՊՍԺ»-ը Գլխացաւանք են Դարձել ՈՒԵՖԱ-ի Յամար



ԱՄՆ-ում շարունակապէս International Champions Cup ընկերական մրցաշարի խաղում անգլիական «Մանչեսթեր Եունայթեդին» Օգնեց «Ռեալի» Դէմ խաղում

ԱՄՆ-ում շարունակապէս International Champions Cup ընկերական մրցաշարի խաղում անգլիական «Մանչեսթեր Եունայթեդին» Օգնեց «Ռեալի» Դէմ խաղում

Յենյարն ու «ՊՍԺ»-ը Գլխացաւանք են Դարձել ՈՒԵՖԱ-ի Յամար

Ֆուտպոլի եւրոպական միութեանը լրջօրէն մտահոգել է պրագիլացի յարձակուող Նեյմարի շուրջ ստեղծուած իրավիճակը:

Ինչպէս տեղեկացնում է RMC Sport ռատիոկայանը, Փարիզի «ՊՍԺ» ակումբը «Բարսելոնայի» ֆուտպոլիստին ձեռք բերելու համար պատրաստ է վճարել 222 մլն եւրո փոխհատուցում: Դա հենց այն գումարն է, որը նշուած է Նեյմարի պայմանագրում՝ նրան գնելու դէպքում:

ՈՒԵՖԱ-ն արդէն կապ է հաստատել ֆրանսական կողմի հետ եւ տեղեկացրել, որ եթէ գործարքը կայանայ, ապա դա կ'ընդունուի որպէս «ֆրանսական ազնիւ խաղի» խախտում եւ ակումբը խստօրէն կը պատժուի:

Ինչպէս յայտնում է ռատիոկայանը, «ՊՍԺ»-ը ցանկանում է Նեյմարի պայմանագիրը գնել երրորդ անձի կամ անձամբ ֆուտբոլիստի օգնութեամբ, ինչը թոյլատրուած է ՈՒԵՖԱ-ի կանոնակարգով: Սակայն եւրոպական ֆուտպոլի ղեկավարները նախապէս նշել են, որ տրանսֆերի ժամանակ կատարուած ցանկացած խոշոր վճարում վերագրուելու է ֆրանսական ակումբին:

Այս լուրը զայրացրել է նաեւ «Բարսելոնայի» երկրպագուներին, որոնք ակումբի ղեկավարներին յորդորել են վաճառել պրագիլացի յարձակուողին, բայց ուղիղ 222 մլն եւրո փոխհատուցում ստանալու դէպքում:



Քրիստոֆեր Ֆրումը՝ «Թուր դը Ֆրանսի» Քառակի Յաղթող

Team Sky թիմի բրիտանացի հեծանուորդ Քրիստոֆեր Ֆրումը երրորդ տարին անընդմէջ նուաճեց «Թուր դը Ֆրանս» բազմօրեայ խճուղային հեծանավազքի ախոյեանի տիտղոսը:

Ֆրումը գրանցեց 86 ժամ, 20 րոպէ 55 վայրկեան արդիւնք: Ընդհանուր հաշուարկում երկրորդ տեղը գրաւեց քոլումբիացի Ռիգոբերտո Ուրանը, որն առաջատարին զիջեց 54 վայրկեան: Լաւագոյն եռեակը եզրափակած Ռոմէն Բարդէն Ֆրումից հետմնաց 2 րոպէ 20 վայրկեան:

Քրիստոֆեր Ֆրումը «Թուր դը Ֆրանսի» յաղթողի տիտղոսը նուաճել էր նաեւ 2013, 2015 եւ 2016 թուականներին:



Յայաստանի Խումբը Յաղթեց Ատրպէյճանին



Ռումինիայում աւարտին մօտեցող բասկետբոլի տղամարդկանց եւրոպայի մինչեւ 20 տարեկանների Ե գիւլիգիոնի առաջնութեան 17-րդ տեղի համար խաղում Հայաստանի երիտասարդական հաւաքականը յաղթեց Ատրպէյճանի խումբին:

Առաջին քառորդում 10 միակորի առաւելութեամբ յաղթեց հայկական խումբը, իսկ երկրորդում նոյն տարբերութեամբ ուժեղ գտնուեցին ատրպէյճանցիները: Ընդմիջումից յետոյ Հայաստանի հաւաքականը կարողացաւ յաղթանակ կորզել: Հանդիպման վերջին վայրկեաններն անցան լարուած պայքարում: Հայաստանի խումբն ուներ մէկ միակորի առաւելութիւն, որը պահպանեց եւ աւելացրեց եւս մէկով:

Յիշեցնենք, որ հայ պասկետբոլիստները խմբային փուլի 4 խաղերից երեքում պարտուել էին Ֆինլանդիայի (69:95), Բելառուսի (56:67) եւ Բելգիայի (74:87) խումբերին եւ միակ յաղթանակը տարել էին խմբի առաջատար Լեհաստանի նկատմամբ (56:45): Վիզեն էսկիջեանի գլխավորած թիմն «Ա» ենթախմբում գրավել էր վերջին՝ 5-րդ տեղը:

Շախմատի Աշխարհի Գաւաթի Խաղարկութեանը Յայաստանը Կ'ունենայ 3 Մասնակից

Շախմատի աշխարհի գաւաթի խաղարկութիւնում Հայաստանը կը ներկայացնեն երեք գրոսմայստերներ:

Աշխարհի գաւաթի խաղարկութեանը Հայաստանը կը ներկայացնեն Լեւոն Արոնեանը, Ռոբերտ Յովհաննիսեանը եւ Հրանտ Մելքոնեանը:

Այս տարուայ շախմատի աշխարհի գաւաթի խաղարկութիւնը կը

Միշա Ալոյեանի Երկրորդ Յաղթանակը Պրոֆեսիոնալ Ռինգում

Մոսկուայի Կարմիր հրապարակում տեղի ունեցած բռնցքամարտի երեկոյի գլխաւոր մենամարտում Ռուսաստանի հաւաքականի նախկին անդամ Միշա Ալոյեանը երկրորդ յաղթանակն է տարել պրոֆեսիոնալ ռինգում:

WBC Silver տիտղոսի համար մենամարտում թեթեւագոյն քաշային կարգում հանդէս եկող Ալոյեանը 12 ռաունդում մրցավարների միաձայն որոշմամբ յաղթել է նիկարագուացի Մարվին Սոլանոյին՝ 119-109, 118-110, 117-111:

Յիշեցնենք, որ Մայիսի անցկացրած առաջին պրոֆեսիոնալ մենամարտում Ալոյեանը 10 ռաունդում պարտութեան էր մատնել նիկարագուացի Յադեր Կարդսոնին եւ նուաճել WBA-ի մայրցամաքային գոտին:

Մոսկուայի «Արարատը» Յաղթանակով Է Մեկնարկել Ռուսաստանի Գաւաթում

Ֆուտպոլի Ռուսաստանի գաւաթի խաղարկութեան 1/128 եզրափակիչում Մոսկուայի «Արարատը» մրցակցի խաղադաշտում 3:1 հաշուով յաղթել է «Դոլգոպրոլդնիին»: Մոսկովեան ակումբից կոլի հեղինակ են դարձել Արտիոմ Վորոնկինը, Դաւիդ Խուրցիձէն եւ Կոնստանտին Մորոզովը:

Այս յաղթանակից յետոյ «Արարատը» դուրս եկաւ 1/64 եզրափակիչ, որտեղ կը մրցի Ռամենսկոյեի «Սատուրնի» հետ:



կայանայ Սեպտեմբերին Թբիլիսիում: Եզրափակիչի մասնակիցները իրաւունք կը ստանան մասնակցել աշխարհի չեմպիոնի հաւակնորդների մրցաշարին: